




**Առողջ ապրելակերպը դասավանդող ուսուցիչների
դիրքորոշումները սեռական դաստիարակության թեմայի
վերաբերյալ**

Հետազոտություն

Հետազոտությունն իրականացվել է ԵՊՀ Գեներային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի կողմից:

Հետազոտությունը իրականացվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում:



Ծրագիրը ֆինանսավորվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի» կողմից

Բովանդակություն

Ճանութացում հետազոտությանը	3
Դիրքորոշումները «Առողջ ապրելակերպ» դասաժամի դասավանդման վերաբերյալ.....	4
Դասընթացը դասավանդող մասնագետը և գործընթացի երկկողմանի հետաքրքրությունը.....	9
Ուսուցչի դերը՝ որպես «Առողջ ապրելակերպ» դասաժամի դասավանդող	13
ՎԱ բլոկի առանձին թեմաների դասավանդման առանձնահատկությունները	15
Սեռական կյանքի փորձ, սեռական կողմնորոշում, սեր և սիրահարվածություն	19
Հակաբեղմնավորիչ միջոցներ և հղիության արհեստական ընդհատում	23
Սեռական բռնություն և ոտնձգություններ	25
Գենդերային դերեր.....	27
Դասաժամեր և թեմաների փոփոխություններ.....	30
Ուսուցիչների կողմից ստացված առաջարկություններ	31

Ծանոթացում հետազոտությանը

Հետազոտությունը, որը ներկայացվում է ընթերցողի ուշադրությանը, նվիրված է ՀՀ 21 հանրակրթական դպրոցներում (մասնավորապես՝ ավագ դպրոցի մակարդակում) «Առողջ ապրելակերպ» (ԱԱ) դասաժամի, մասնավորապես՝ «Վերարտադրողական առողջության» (ՎԱ) բլոկի դասավանդման գնահատմանը և ուսուցիչներին հանդիպող դժվարությունների վերհանմանը: Նշված հետազոտությունը որակական բնույթի է, ինչը ենթադրում է, որ մասնակիցների թիվը, գուցե և «քիչ» է, սակայն կարևոր է ոչ թե քանակը, այլ նրանց հայտնած տեղեկատվության բովանդակությունը, որը հետազոտական թիմը փորձել է վերլուծել: Այս և նման հետազոտությունները ուղղված են բացահայտելու աշխատանքային, և հատկապես, դասավանդման գործընթացի մանրամասները, որոնք քանակական հետազոտությունները թերանում են պարզաբանելուց՝ հիմնված լինելով հիմնականում մասնակիցների քանակի և հետազոտողների կողմից արդեն իսկ նախանշված պատասխանների տարբերակների վրա:

Հետազոտությունը հիմնված է **խորին հարցազրույցների** մեթոդի վրա 21 ուսուցիչների հետ, ովքեր դասավանդում են ԱԱ դասաժամը **Արմավիր, Գյումրի, Եղեգնաձոր, Երևան, Ջերմուկ, Վայք և Վանաձոր** քաղաքներում և **Առինջ** համայնքում: Երևանում դպրոցները, որոնց ուսուցիչների հետ անցկացվել է հետազոտությունը, բաժանվել են ըստ մի քանի համայնքների՝ **Արաբկիր, Ավան, Աջափնյակ, Էրեբունի, Կենտրոն, Նոր-Նորք, Քանաքեռ-Զեյթուն**:

Առողջ ապրելակերպ դասաժամի դասավանդման վերաբերյալ հետազոտությունը հնարավորություն տվեց դուրս բերել այս դասընթացի դասավանդման առանձնահատկությունները ուսուցիչների դիրքորոշման, ծրագրային բացթողումների, ինչպես նաև ուսուցիչների տեղեկացվածության մակարդակը թեմաների վերաբերյալ:

Այսպես, անդրադառնալով ԱԱ դասաժամի նպատակայնությանը, ուսուցիչները տվեցին մի շարք պատասխաններ, որոնց վերլուծությունը ներկայացվում է ստորև:

Հետազոտությունը ցույց տվեց, որ շատ երեխաներ գաղափար չունեն անգամ սեռական հասունացման հիմնական գործընթացների մասին: Այստեղ առաջանում է երկկողմանի հիմնախնդիր. մի կողմից Վերարտադրողական առողջության բլոկի հաջողությունը կախված է ուսուցիչների դիրքորոշումներից, իսկ մյուս կողմից՝ ծնողները մեծ մասամբ հույսը դնում են դպրոցում երեխայի ստացած գիտելիքի վրա, ինչը փաստորեն կարող է լինել անբավարար: Այսպիսով, դասընթացի և դրա նկատմամբ համակարգված, բազմամակարդակ վերաբերմունքի կարևորությունը և անհրաժեշտության գիտակցումը դառնում է առաջնային: Իսկ բազմամակարդակ/բազմակողմանի մոտեցումը ենթադրում է, որ այս թեմաների շուրջ քննարկումներում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

- Անհրաժեշտ է **քաղաքական կամք** այն իմաստով, որ պետությունը հնարավորին չափ շահագրգռված պետք է լինի նման թեմաների դասավանդմամբ՝ ակտիվ կրթական ծրագրերի, դրանց վերանայման և ժամանակակից գիտություններին համապատասխանեցնելու տեսանկյունից:
- Անհրաժեշտ է **դպրոցներում ավելի քիչ կախվածություն կրթական պետական մարմիններից**, որոնք կարող են այս կամ այն կերպ խոչընդոտել «արտաքինից» ավելի նպատակային ուսումնառություն ապահովելու գործընթացներին: Սա, իր հերթին, չի ենթադրում տարերային թեմաների ներմուծում դպրոցներում, սակայն հմուտ մշտադիտարկման առկայությամբ կարող է բերել անզնահատելի արդյունքների:
- Անհրաժեշտ է **ծնողների շարունակական կրթում և ծնողավարման հմտությունների զարգացում** բանիմաց և չկաշկանդվող, ինչպես նաև համատարած կարծրատիպերից զերծ մասնագետների կողմից:
- Ուսուցիչներին անհրաժեշտ են ավելի **լայնածավալ և բազմակողմանի տեղեկատվություն պարունակող դասագրքեր և ուսումնական նյութեր**:

Դիրքորոշումները «Առողջ ապրելակերպ» դասաժամի դասավանդման վերաբերյալ

Ուսուցիչների շրջանում ԱԱ դասաժամի դասավանդման նպատակի շուրջ կա հիմնականում ընդհանուր դիրքորոշում. աշակերտներին՝ նոր սերնդին, գիտելիքների փոխանցում կյանքի կարևոր ասպեկտների մասին՝ **հիգիենա, կախվածություններ, թրաֆիքինգ, առողջ սնունդ, ֆիզիկական առողջություն, սեռական վարքագիծ, սեռական հասունացում, սեռավարակներ** և այլն: Բոլոր ուսուցիչները դասավանդման ընթացքում ընդունում և շեշտադրում են անձնական հիգիենայի, թմրանյութերից, ծխախոտից, ալկոհոլից կախվածության կանխարգելման, սեռական կյանքի հետ կապված զգուշավորության մասին խոսելու և այդ թեմաները քննարկելու կարևորությունը:

Այդուհանդերձ, ուսուցիչների պատասխաններից պարզ է դառնում, որ նրանցից յուրաքանչյուրը առանձին դասաժամում ներառված թեմաներին տալիս է քիչ կամ շատ կարևորություն: Այդպես, եթե վերը նշված ընդհանուր թեմաները կարևորվում են բոլորի կողմից, ապա դրանց նկատմամբ **դիրքորոշումները և դասավանդումը** տարբերվում են: **Մի խումբ ուսուցիչներ** հաճույքով և եռանդով են մոտենում բոլոր թեմաների քննարկմանը, **մյուս մասը** գտնում է, որ մինչ առարկան անցնելը աշակերտները պետք է ընտանիքում ձեռք բերեն տարրական գիտելիքներ ուսուցչի գործը, այսպես ասած, «հեշտացնելու» համար: Հետագոտությանը մասնակցած

ուսուցիչների **մեկ այլ խումբ** էլ գտնում է, որ, ինչպես և ենթադրվում էր, ընդհանուր թեմաները (հիգիենա, կախվածության տեսակներ) կարևոր են, իսկ մյուս թեմաները (սեռական կյանք, սեռական վարքագիծ, սեռական հասունացում) ավելի քիչ կարևոր են և նպատակահարմար չեն դպրոցում դասավանդելու տեսանկյունից: **Որոշ ուսուցիչներ** առարկայի նպատակի քննարկման ընթացքում **սեռական կյանքի և հարաբերությունների բլոկին** ընդհանրապես չեն անդրադառնում՝ պատճառաբանելով, որ երեխաները ամաչում են և դասը խափանվում է:

«Որ մեր աշակերտները առողջ լինեն, հիգիենայի հետ կապված»: (ք. Երևան, Ավան, ավագ դպրոց)

«Այլ դասընթացը շատ նպատակային է, իր կառուցվածքով նպաստում է աշակերտների և՛ գիտելիքների զարգացմանը, և՛ ֆիզիկական հասկությունների դրսևորմանը: Եվ աշակերտները ստանում են ճիշտ գիտելիքներ թե՛ իրենց կեցվածքի, թե՛ իրենց վարվելակերպի, թե՛ դահլիճում իրենց կանոնակարգի վերաբերյալ: Նպատակը տեղին է, առարկան տեղին է և շատ ուսանելի.» (ք. Երևան, Արաբկիր, ավագ դպրոց)

«Նախ Այլ ես սենց եմ հասկանում՝ նախ և առաջ, Այլ-ը ֆիզկուլտուրայի հետ կապ չունի, սա առողջ մտածողություն է նշանակում: Եթե երեխան կարողանա ճիշտ մտածի, ճիշտ գնահատի իրավիճակը, ինքը կարող է և՛ իր սեփական առողջության մասին մտածել, և՛ իր կեցվածքի մասին մտածել, և՛ չծխել, և՛ այլ, և այլ շեղումներ չտալ վարքագծի մեջ: Առողջ ապրելակերպը ես տեսնում եմ Էդպես՝ բարոյական դաստիարակության միջոցով, որը բխելու է իրանց սեփական Ես-ի շահերից.» (ք. Երևան, Էրեբունի, ավագ դպրոց)

«Ուրեմն, երբ որ ես առարկան, բերեցին դպրոց, օդից չեկավ, օդից չորոշեցին, որ պետք ա ես առարկան դպրոց մտնի: Պորբլեմը հասունացավ, անտեղյակությունը հասունացավ, դրա համար առարկան մտավ դպրոց, որպեսզի բացի ծնողներից, գիտակից ծնողների մասին է խոսքը, բացի ծնողներից, որ անընդհատ տեղյակ են պահում երեխեքին, դպրոցն էլ պետք ա օգնություն ցույց տա:» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Հետաքրքրական մի հանգամանք ևս. եթե Երևանում հետազոտությանը մասնակցած դպրոցների ուսուցիչները ավելի բաց են քննարկելու բոլոր թեմաներն ընդհանուր առմամբ, պատկերը փոխվում է մարզային դպրոցներում: Այնուամենայնիվ միանշանակ հնարավոր չէ պնդել, որ մարզերում ուսուցիչները չեն քննարկում դասընթացի ավելի զգայուն՝ վերարտադրողական առողջության բլոկը: Սակայն հետազոտությունը հստակ կապ արձանագրեց. Այլ դասաժամի դասավանդման և հատկապես վերարտադրողական առողջության բլոկի դասավանդման հաջողությունը կախված է ոչ միայն հստակ ծրագրից և հստակեցված պարտադիր բնույթ ունեցող թեմաների դասավանդումից, **այլ հենց**

ուսուցչի՝ թեմաների նկատմամբ անձնական դիրքորոշումից և դրանց կարևորություն տալու հանգամանքից ևս:

«Վախ, հորս արև զգվում եմ էտ բաժնից: Ես մեր տնօրենի հետ եմ խոսել: Տղամարդը, հայ, դաստիարակված հասարակության մեջ, ինչքան ուզում ա էրեխեն զարգացած լինի, ինքը ո՞նց կարա նստի սեռական դաստիարակության մասին խոսի:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

«Այն առարկայի դրական կողմերը նրանում են, որ մենք մեր մատաղ սերնդին, աշակերտներին իրազեկում ենք, սովորեցնում ենք այն գիտելիքը, որը որ շատ կարևոր ա այսօր՝ թրաֆիքինգի դեմ պայքարը, սեռավարակների դեմ պայքարը, որը որ պատահական ինտիմ հարաբերությունների արդյունք ա.» (ք. Արմավիր, ավագ դպրոց)

Վերը նշվածից պարզ է դառնում, որ սեռավարակները ուսուցիչների համար նաև հանդիսանում են հիմնականում «պատահական ինտիմ հարաբերությունների» արդյունք, ինչն այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, երբ սեռավարակների տարածման և իրավիճակի մասին հետազոտություններն ունեն տարբեր փաստարկներ: Ըստ էության, նման և մի շարք այլ մեջբերումներից պարզ է դառնում, որ ուսուցիչները նպատակային են գտնում հատկապես սեռավարակների և սեռական անկանոն հարաբերությունների քննարկումը՝ նշված ընդհանուր թեմաների հետ մեկտեղ: Սա ևս ինչ-որ չափով կարող է փաստել, որ **ուսուցիչներն իրենք էլ են կաշկանդվում** նման թեմաների դասավանդման ընթացքում: Այս իմաստով կարևոր է, որ ուսուցիչներն իրենք նշում են, որ որոշ թեմաների դեպքում նպատակահարմար կլիներ **բժշկի կամ այլ մասնագետի օգնությունը** և վերջիններիս կողմից **«որոշ» թեմաների դասավանդումը**: Այս առումով հետաքրքիր է նաև վերահաստատել ուսուցչի գեղարվեստային պատկանելիության կարևորության մասին ենթադրությունը, համաձայն որի **կին ուսուցիչների համար դժվար է բացատրել այս բլոկի թեմաները (կաշկանդվածության առումով) տղա աշակերտներին, իսկ տղամարդ ուսուցիչների համար՝ աղջիկ աշակերտներին**:

«Ժամանակին կին ուսուցիչ ունեինք, որ ինքը ստեղ դասավանդել ա մինչև իմ ընդունվելը, շատ հաճախ աղջիկների հետ կապված, որ ինչ-որ բաներ լինում ա, խնդրում եմ, որ ընկեր Գ.յանը աղջիկների հետ ավելի մանրամասնորեն անի: Դե, աղջիկների հետ մի քիչ պրոբլեմս ավելի շատ ա՝ զուտ էն առումով, որ իմ բացատրածը մի քիչ լավ ընկալելի չի լինի... Ոչ թե լավ ընկալելի չի լինի, այլ՝ իրանց կոմպլեքսավորվածության արդյունքն ա, էդ ամոթ ասվածն ա, որ շատ բաներ չեն ընկալում... Տեսնում եմ, որ չեն էլ գիտակցում շատ բաներ, բայց չեն էլ հարցնում, դրա համար կինը՝ որպես դասատու, ավելի նախընտրում են, որ ընկեր Գ.յանը մատուցի»:» (ք. Արմավիր, ավագ դպրոց, տղամարդ)

Գենդերային առանձնահատկությունները այս առումով ակնայտ են նաև **տարիքային տարբերությունները** շեշտադրելիս, երբ տղամարդ ուսուցիչները մատնաշում են իրենց կողմից երիտասարդներին նմանատիպ կյանքի տրամադրման անհեթեթությունը, իսկ կանայք, չնայած իրենց իսկ կողմից նշված կաշկանդվածությանը, ընդհակառակը, իրենց բարձր տարիքը ավելի շուտ դիտարկում են որպես առավելություն:

«Ամեն ինչ, ամեն ինչ իրենց հետ գրուցում եմ, որպեսզի իրենք գրուցեն... Տղաների հետ մի քիչ ավելի կաշկանդված ենք: Երևի բժիշկ լինեի, ավելի ազատ կլինեի: Կարող է տղաների մոտ ինչ-որ բաներ չարտահայտվեմ, բայց աղջիկների դեպքում նույնիսկ լրացուցիչ հարցեր են տալիս սիրահարվելու հետ կապված, չէ՞ որ ավագ դպրոցը արդեն հասունացման շրջանն է, ու իրանց մոտ էդ սթրեսը լինում և և ընտանիքում պրոբլեմներից:» (ք. Երևան, Ավան, ավագ դպրոց, կին)

«Երևի իմ բախտը բերել է, որ մեր տարիքային տարբերությունը մեծ է, իրանք ինձանից չեն ամաչում, որովհետև երիտասարդը ամաչում է, ինքն էլ ամաչում երեխայի հետ կիսվի:» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց, կին)

«...Բայց երբ որ գալիս արդեն էս ընտանեկան խնդիր, ինչպես հղիանալ, ոնց դրա դեմ պայքարել, ո՞նց կարա 56 տարեկան տղեն, դնի ու 17 տարեկանների հետ խոսի: Դա մենք չենք հասկանում:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց, տղամարդ)

Այս իմաստով կարևոր է նշել մեկ կարևոր փաստ ևս, այս բլոկի թեմաների քննարկման հետ կապված ուսուցչի և աշակերտի միջև կաշկանդվածությունը նկատվում է ոչ միայն ուսուցիչների, այլ ուսուցիչների խոսքով՝ նաև աշակերտների կողմից: **Կաշկանդվածության** և ամոթի մասին նշում են հետազոտությանը մասնակցած բոլոր ուսուցիչները, սակայն այստեղ էլ կան որոշ տարբերություններ: Զետաքրքիր է, որ **տղամարդ ուսուցիչներից շատերը նշում են, որ աղջիկները խուսափում են իրենց հետ շփումներից**, տարատեսակ թեմաների ընթացքում պասիվ են: Իսկ **կին ուսուցիչները նշում են, որ, եթե անգամ տղաները պասիվ են դասերի ընթացքում, շատ հաճախ առանձին զրույցների ժամանակ հարցեր են տալիս:** Սրանք հիմնականում մի քանի դեպքեր են, որոնք ընդհանուր ֆոնի վրա թերևս հնարավոր է կորցնեն իրենց կարևորությունը:

«Դե էս հասկանում եմ, էս իրանց հետ հետո առանձին խոսում եմ, հարցնում եմ, թե ինչի՞ չեկան այդ դասին, ասում են՝ «Տո ընկե՛ր Զ.-յան, ամոթ է, աղջիկների մոտ ի՞նչ ասեմ: Կրևա շատ բան գիտեմ, կրևա շատ բան կարամ ասեմ, բայց աղջիկների մոտ ի՞նչ ասեմ է: Այ այսպես, նրանց էլ է հետաքրքիր, բայց կյուլաններ կան, որ ուսուցիչը պետք է հասկանա և՛ երեխաներին, և՛ տղաներին, և՛ աղջիկներին:» (ք. Գյումրի, ավագ դպրոց, կին)

«Սեռական դաստիարակությանը չգիտեմ ոնց ձևակերպենք էտ պահը, հետաքրքրվում են ամեն դասարանից հիմնականում տղաները, աղջիկները

ամաչում են, կարողա հարցեր ունենան, բայց որպես տղամարդ ինձ չդիմեն: Խոսափում են, շատ քիչ տոկոս աղջիկներից ու տղաներից, որ հարցեր են ունենում դասից հետո անդրադառնում են: Դասի ընթացքում, երբ որ անդրադառնում եմ զգում եմ, որ երեխեքը՝ Էդ տարիքի, ամաչում են լսեն, ու ոնց որ անտարբեր են: Շատ հետաքրքիրա իրենց, բայց միևնույն ժամանակ ոնց որ ամաչում են:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց, տղամարդ)

Կաշկանդվածության առումով կարևոր է նաև նշել հարցի գեղերային ասպեկտի մասին, քանի որ կին ուսուցիչներից շատերը շեշտում են, որ իրենց ավելի հարմար է դասերն անցկացնել աղջիկների հետ, քան տղաների: «Տղաների հետ չեմ կարողանում սեռական հասունացման մասին խոսել, իսկ աղջիկներին ստացվում է ներկայացնել նաև տղաների հասունացման հարցերը: Ես գտնում եմ, որ դա պարտադիր է նույնիսկ, բայց որքանով է ստացվում հայկական մենտալիտետի հետ կապված, և աշակերտների կողմից, և նաև մեր կողմից, որովհետև ուսուցիչն էլ շատ բան բաց ա թողնում իր կոմպլեքսների պատճառով: Ես անձամբ իմ անունից եմ խոսում, բայց ես գիտեմ, որ մեր տղաներն էլ՝ մենք երկու մասնագետ էլ ունենք, իրենք էլ կոմպլեքսավորվում են, որովհետև մենք երբեմն քննարկում ենք, դասախոսներ ենք ունենում, և այլն, ես հասկանում եմ, որ իրենք էլ մի փոքր թերացում ունեն:» (ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, ավագ դպրոց, կին)

Տղամարդ ուսուցիչների դեպքում նրանց ոչ միայն ավելի հեշտ է աշխատել և քննարկումներ կազմակերպել տղաների հետ, այլ նաև իրենց իսկ խոսքերով աղջիկներն իրենք էլ ամաչում են և երբեմն բացակայում դասերից: «Առաջին շաբաթը մի քիչ որոշ վերապահումներով են լինում, լինում են բացակայություններ, որ կիսամյակը նոր ա սկսվել՝ ոչ թեմայի հետ կապված, իսկ ընթացքում եթե լինում են բացակայություններ արդեն կոնկրետ թեմաների հետ կապված՝ ապա կարելի է ասել նույն սեռավարակների, անցանկալի հղիության հետ կապված: Բացակայում են հիմնականում աղջիկները, տղաներին շատ հետաքրքիր ա նման բաներ: Աղջիկները տենց մեծ թիվ չեն կազմում, բայց կան...» (ք. Արմավիր, ավագ դպրոց, տղամարդ)

Հարկ է նշել, նաև որ գրեթե բոլոր մասնակից ուսուցիչները նշում են աշակերտների տարիքային առանձնահատկությունները այս տարիքում, ֆիզիոլոգիական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում աշակերտների մոտ, ինչպես նաև սիրահարվածության թեմայի նկատմամբ մեծ հետաքրքրությունը:

Դասընթացը դասավանդող մասնագետը և գործընթացի երկկողմանի հետաքրքրությունը

Այս դասաժամի դասավանդման վերաբերյալ տարբեր քննարկումների ընթացքում հատկապես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բազմիցս հնչեցվել է այն հարցը, **թե որքանով է նպատակահարմար ֆիզկուլտուրայի ուսուցիչների կողմից առողջ ապրելակերպի դասավանդումը**: Այս հարցի շուրջ ուսուցիչների շրջանում նույնպես առկա են **ոչ միանշանակ դիրքորոշումներ**: Այդպես, օրինակ հետազոտության ընթացքում ուսուցիչների մի մասը նշում էր, որ հենց ֆիզկուլտուրայի ուսուցիչն է, որ պետք է դասավանդի ԱԱ-ը, իսկ մյուս մասը գտնում է, որ ֆիզկուլտուրան և ԱԱ-ը պետք է առանձնացվեն և ԱԱ-ի համար անհրաժեշտ է առանձին մասնագետ: *«Ես ֆիզկուլտուրայի դասատու եմ, բայց չեմ ամաչում նույնիսկ սեռական հարաբերությունների մասին իրանց բացատրել»*: (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

«Նորմալ եմ վերաբերվում: Գիտե՞ք ինչ, մենք հեշ խուճապի չմատնվեցինք, երբ մեզ հայտնեցին, թե դուք պիտի դասավանդեք, որովհետև մենք ինստիտուտում անցել ենք Էդ առարկան: Մեզ համար Էդ նորությունն չէր. ուղղակի պետք էր մի քիչ նայել գրականությունը, պատրաստվել, որ կարող ա երեխան այնպիսի հարց տա, որ դու մոռացած լինես կամ չգիտես, իսկ դա արդեն գեղեցիկ չէ. պիտի քեզ մի քիչ պատրաստես նոր դասդ սկսես»: (ք. Գյումրի, ավագ դպրոց)

«Եվ շատ լավ է, որ դա դասավանդում են ֆիզկուլտուրայի ուսուցիչները: Դա շատ ավելի աշխատանքը տանում է դեպի նպատակային, այսինքն՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչը ավելի տեղյակ է աշակերտի ֆիզիկական դաստիարակությանը և նա յուրաքանչյուր աշակերտի տալիս է տեսականորեն ճիշտ մոտեցում իր առարկայի վերաբերյալ»: (ք. Երևան, Արաբկիր, ավագ դպրոց)

Կան ուսուցիչներ, ովքեր անկեղծորեն նշում են, որ իրենց ծանրաբեռնվածության մեջ դասաժամը ներառվել է ժամերը լրացնելու նպատակով: Դա էլ հենց հիմք է հանդիսանում ուսուցիչների խիստ բացասական վերաբերմունքի:

«Սա էն գլխից տվել են ֆիզկուլտի դասատուներին: Տվեցին մի անգամ քիմիայի դասատուին, տեսան չէ, մենք նեղվեցինք, հետո մեզ տվեցին: Առողջ ապրելակերպ, պետքա ֆիզկուլտուրայի ուսուցիչը դասավանդի: Տևորենի հետ էս տարի պայմանավորվածությունն ձեռք բերեցինք, որ գալիս եմ էս բլոկը, դիմեմ ուսուցչուհիներին՝ իրենք պարապեն: Ես չպարապեմ: Զիմա պրծել ենք Էդ բլոկը»: (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

«Ես չեմ ընտրել, երևի ծանրաբեռնվածությամբ ստացվեց...» (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

«Յիմնականում աշխատում ենք Էդ սեռական թեմաները մակերեսորեն անենք, ես ճիշտ չեմ գտնում, որ Էտ առարկան ֆիզկուլտուրայի ուսուցիչները դասավանդեն: Ավելի լավ կլինի կենսաբանության մասնագետները անելն, մենք էլ կարող էինք նպաստել: Բայց ինչ վերաբերումա սեռականին, ինձ թվումա, որ սխալա ֆիզկուլտուրայի ուսուցիչներին տալը: Դա իմ կարծիքնա:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Չետագոտությունը ցույց տվեց, որ կա տարբերություն նաև այն դեպքերում, թե դասաժամը դասավանդվում է ավագ դպրոցում, թե դրանից ցածր դասարաններում: Այդպես, հետաքրքրվածության աստիճանը 8-11 դասարանների միջակայքում փոփոխվում է:

«Նայած թեմա՝ նայած դասարանում: Օրինակ, ավագ դասարաններում ավելի հետաքրքրված են աղջիկ-տղա հարաբերություններով, հիգիենայի թեմայով, սեփական խնամքով, ինտիմ կյանքի թեմաներով: Իսկ փոքր տարիքում, եթե հետաքրքրում էլ ա իրենց, ամաչում են հարցնեն, իսկ ավագ դասարաններում ուղիղ և՛ հարցնում են, և՛ ասում են, և՛ պատասխանում են:» (ք. Գյումրի, ավագ դպրոց)

Այն դասաժամը դասավանդող ուսուցիչների որոշ մասի համաձայն, **ավագ դպրոցում աշակերտներն ավելի տեղեկացված են:** Ուսուցիչների մեկ այլ խումբ գտնում է, որ քանի որ ավագ դպրոցում ձևավորվում են նաև նոր աշակերտական խմբեր, վերջիններս ունեն տարբեր պատկերացումներ և գիտելիքներ դասընթացի վերաբերյալ:

«Ճիշտն ասած ավագ դպրոց գալիս են տարբեր դպրոցներից, նկատել եմ, այո՛, որ կան դեպքեր, որ չեն անցնում Էս առարկան, և կան Էնպիսի դպրոցներից հաճախած երեխեք, որ վառ երևում ա, որ անցել են Էս Էրեխեքը: Բայց նաև հակառակը կա:» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Յիմնականում այն խմբերում, որտեղ աշակերտներն ավելի տեղեկացված են, ուսուցիչը ավելի մեծ պատասխանատվություն է ունենում պատրաստվելու, հավելյալ տեղեկատվություն փնտրելու և գտնելու, դրանք դասարանում տարածելու և քննարկելու համար:

Այդուհանդերձ, մեր հետազոտությունը ցույց տվեց, որ անկախ դպրոցի գտնվելու վայրից, (մարզային քաղաք, թե Երևան) բոլոր ուսուցիչները անկախ ուղեցույցում տեղ գտած կյուլթից, **աշակերտներին մատուցում են հավելյալ տեղեկատվություն** ըստ վերջիններիս հետաքրքրությունների և նախասիրությունների:

Փաստորեն կարելի է ունենալ երկու տարբեր **հետևություն-ենթադրություն**: **Նախ**, այստեղ կարելի է ենթադրել, որ դասընթացի ուղեցույցի հիմնական թեմաներից բացի այլ թեմաներ քննարկելը հիմնականում պայմանավորված է նրանով, որ աշակերտներին ազատ հնարավորություն է տրվում ընտրելու քննարկվող թեմաները: Այս հանգամանքը ոչ թե բացասական, այլ ընդհակառակը, դրական արդյունքներ կարող է տալ, եթե դասընթացը կարող է կազմակերպվել ըստ յուրաքանչյուր աշակերտի ցանկության: Սակայն, միևնույն ժամանակ, հարկ է նշել որ դա ոչ ուղղակիորեն դրդել աշակերտին ըտրություն կատարել ավելի «հեշտ» կամ «քիչ զգայուն» թեմաների շարքից՝ այդպիսով իսկ խուսափելով կաշկանդող, «ամոթալի թվացող» վերարտադրողական առողջության բլրկի դասերն անելու պարտադրանքից: *«Շեղումներ չեն լինում, բայց, ասենք, եթե խոսքը վերաբերում է սեռական հասունացմանը, ելնելով մեր աշակերտների նախասիրությունից և դասարանում աշակերտների կազմակերպվածությունից, մենք փորձում ենք ուսուցիչներով դասը անցկացնել համաչափ, այսինքն, և՛ թեման չտուժի, և՛ աշակերտը ստանա իր գիտելիքները: Այսինքն՝ փորձում ենք յուրաքանչյուր աշակերտին անհատական մոտեցում ցուցաբերել՝ անցկացնելով մեր դասը, մեր դասաթեման:»* (ք. Երևան, Արաբկիր, ավագ դպրոց)

«Մեր ձեռնարկից օգտվում եմ: Իհարկե, լինում են նյութեր, որ մենք օգտվում ենք համացանցից, այսինքն՝ հավելյալ նյութեր, զգում ես, որ անհրաժեշտ ա:» (ք. Արմավիր, ավագ դպրոց)

«...Գալիս է Էդ հատվածը, մենք Էդտեղ ստոպ ենք տալիս, չի ստացվում մեզ մոտ: Շեղվում ենք, շեղվում ենք ուղեցույցից: Լրացնում ենք այն թեմաներով, որը երեխեքին շատ հետաքրքրում է, թեմա, որը Էդ տարիքում գալիս է՝ սեր, սիրո խոստովանություն, պահվածք, Էդ թեմաներով ենք զրուցում կամ լրացնում ենք շախմատով, անկեղծ որ ասեմ:» (Երևան, Քանաքեռ-Զեյթուն, ավագ դպրոց)

Երկրորդ ենթադրությունն այն է, որ ուսուցչի ուղեցույցը ինքնին այլևս չի սպառում 21-րդ դարի տեխնոլոգիաների համակարգում ապրող և համացանցից ազատ օգտվել կարողացող աշակերտների (դեռահասների) հետաքրքրությունը (այս ենթադրությունն անում ենք, քանի որ գյուղական համայնքների դպրոցները դուրս են հետազոտությունից, իսկ թե՛ Երևանում, թե՛ մարզային քաղաքներում համացանցի հասանելիությունը բավարար է դրանից օգտվելու համար, ինչպես նաև հիմնվելով հենց մասնակից ուսուցիչների հետ հարցազրույցների վրա):

«...11-ում երեխեքը մտածում են, որ իրանք արդեն ամեն ինչ գիտեն, նույնիսկ իմ ասածը իրանց թվում ա, որ ես մի քիչ կյանքից հետ եմ ընկել՝ իրանք իրանց առաջարկությունը, իրանք իրանց...» (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

«Հիմա ասեմ՝ մենք օգտվում ենք, բայց մեր թեմաները արդեն տասը տարուց ավելի ա նույնն ա, ու սա ներկա երեխեքին արդեն չի հետաքրքրում: Անցած ա, մանավանդ Էս կոմայոլտերը, ինտերնետը, Էս ազատ շփումը կա՝ Էս իրանց համար անցած

բաներ ա, իրանք սաղ գիտեն, նայել են, տեսնում են» (Երևան, Նոր Նորք, ավագ դպրոց)

«Ուղեցույց հանդիսանում ա էդ ինտերնետից օգտվելը» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Փաստորեն, ստացված տեղեկատվության համաձայն ԱԱ դասընթացի և հատկապես ՎԱ բլոկի հաջողությունը կախված է նաև նրանից, թե **որքանով են աշակերտները հետաքրքրված**, քանի որ ուսուցիչները փորձում են այս դեպքում ունենալ ավելի կոլեգիալ դիրքորոշում և **դասավանդում են ըստ աշակերտների հետաքրքրվածության**: Այդուհանդերձ, կրկին պետք է նշել, որ **ուսուցչի աշխարհայացքը, մտահորիզոնը և դիրքորոշումները տարատեսակ հարցերի շուրջ ևս որոշիչ դեր են խաղում առարկայի դասավանդման տեսանկյունից**:

Այլ հարց է, որ ուսուցիչը դասընթացը վարում է իր անձնական շարժառիթներով. կարևոր է հաշվի առնել նաև այն, որ **դասընթացի վարման/անցկացման և արդյունավետության որակական մշտադիտարկում կամ գնահատում չի իրականացվում**, ինչը մեծ բացթողում է հատկապես այնպիսի հասարակության համար, ինչպիսին հայաստանյանն է, որն այլ թեմաների շրջանակներում այդքան կարևորությամբ և ոգևորությամբ քննարկում է ընտանիք կազմելու, երեխա ունենալու, ինչ-ինչ արժեքներ երեխաների մեջ սերմանելու գաղափարները: Այս դեպքում կոնֆլիկտ է առաջանում սպասելիքների և իրականության միջև, ինչը զարմանալիորեն չի ծնում ագրեսիա և դիմադրություն, ինչպիսին լինում է նման այլ դեպքերում (օրինակ՝ LQFS+ անձանց մասին լսելիս): Հաշվի առնելով այս իրավիճակը հարկ ենք համարում շարունակելու մեր վերլուծությունը ավելի խոր ուսումնասիրություն կատարելով ՎԱ բլոկի առանձին թեմաների դասավանդման վերաբերյալ սույն հետազոտության հաջորդ մասերում:

Հավելելով նաև պետք է նշել, որ վերը նշված մեջբերումներից նաև ակնհայտ է դառնում, որ ԱԱ դասաժամի **ուղեցույցում ներառված հիմնական թեմաներից բացի, լինում են նաև այլ թեմաների քննարկումներ**: *«Չես կարող անընդհատ մնալ թեմայի մեջ, եթե երեխան հարց է տալիս, պետք է պատասխանես, չես կարող ասել, չէ ես թեմայից չեմ շեղվում»* (ք. Վայք, ավագ դպրոց) Այս շեղումները պայմանավորված են լինում, հիմնականում դասընթացը աշակերտներին հնարավորին չափ **հետաքրքիր** դարձնելու համար: Մյուս կողմից քիչ դեր չի խաղում նաև այն հանգամանքը, որ ԱԱ-ի համար **նախատեսված է 14 դասաժամ**: Այդպես, ԱԱ դասընթացին հատկացված 14 ժամերը ուսուցիչներն անցկացնում են ֆիզկուլտուրայի դասի շրջանակներում ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ձմեռվա շաբաթների ընթացքում (հիմնականում հունվար ամսին), երբ մի շարք ուսուցիչների համաձայն, դահլիճները չեն տաքացվում: Ահա այստեղ հենց առաջ է գալիս ԱԱ դասաժամի բավական լուրջ **տնտեսական և ռազմավարական կողմի կարևորությունը**:

Հաջորդիվ ներկայացված մեջբերումը, ըստ էության, ամփոփում է վերևում տեղ գտած քննարկում/վերլուծությունը՝ ուսուցիչների անձնական մոտեցումների, ուսուցչի կողմից դասաժամի նկատմամբ լուրջ վերաբերվելու, հավելյալ կյուլթեր օգտագործելու և ժամաքանակների մասին:

«Ամենք չգիտեմ, թե կրթության նախարարությունը դրան քանի ժամ ա տրամադրել: Ես ինտերնետից նայել եմ, հանել եմ էդ տարիքին վերաբերող առողջ ապրելակերպին վերաբերող (էնտեղ շատ ընդարձակա թեմաները, շատ-շատ, ես որ անդրադառնամ շատ բան կա), բայց սեռական դաստիարակությանը, եթե 14 ժամ ա, կարանք 4 ժամ առանձնացնենք: Ես իմ կարծիքն եմ ասում:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Ուսուցչի դերը՝ որպես «Առողջ ապրելակերպ» դասաժամի դասավանդող

Հետազոտությունը հնարավորություն տվեց պարզելու, թե **ինչպես են ուսուցիչները տեսնում իրենց իսկ դերը** ԱԱ դասընթացի և հատկապես վերարտադրողական առողջության բլոկի դասավանդման շրջանակներում: Այս հարցը բավական մեծ կապի մեջ է գտնվում ֆիզկուլտուրայի ուսուցիչ լինելու, դրա հետ կապված բարդությունների և առավելությունների հարցի հետ: Ուսուցիչները հիմնականում նշում են, որ իրենք տեսնում, զգում և գիտակցում են իրենց վրա դրված մեծ պատասխանատվությունը՝ ելնելով դասընթացի նպատակի առանձնահատկություններից: Ոմանք նշում են, որ ֆիզկուլտուրայի ուսուցիչ լինելով, իրենք կարողանում են ավելի ազատ լինել աշակերտների հետ (ի տարբերություն օրինակ քիմիայի կամ կենսաբանության ուսուցիչների): *«Դե, ուղղակի ուսուցիչը պետք է կարողանա դասը կատարյալ, բովանդակայից, ուսանելի անցկացնել: Ամեն դեպքում դա գալիս է, ինձ թվում է, մեզանից՝ մանկավարժներից: Եթե մենք գիտակ մոտենանք մեր գործին, ամեն հարցի աշակերտը կստանա իր որակը ուսուցման պրոցեսում:» (ք. Երևան, Արաբկիր, ավագ դպրոց)*

Ընկերական մթնոլորտին էլ, իր հերթին, նպաստում է այն, որ դասընթացը չի գնահատվում. *«...Ես դասը մի հատ մեծ առավելություն ունի՝ չես գնահատում: Իսկ երեխաների մեջ կա մի բան՝ ինչը որ չի գնահատվում... Ես որ մտնում եմ դասարան, առաջին հերթին ասում եմ՝ երեխեք, սա առարկա չի, սա զրույց ա, և ես իրավունք չունեմ իմ կարծիքը փաթաթեմ ձեր վրա: Սա զրույց ա, ես պետք ա խորհուրդ տամ, դուք պետք ա հակաճառեք: Եթե դուք չհակաճառեցիք ու ականջների կախ լսեցիք, ուրեմն, ես արդյունքի չեմ հասնի: Ես արդյունքի կհասնեմ այն ժամանակ, երբ որ*

դուք հակաճառեք, այսինքն՝ ձեր ուղեղը սկսում ա աշխատել՝ բա խի՞, բա ո՞նց.» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Չնայած մեծ մասամբ ուսուցիչները գիտակցում են իրենց վրա դրված պատասխանատվությունը, Վանաձորում մեր հետազոտությանը մասնակցած ավագ դպրոցի տղամարդ ուսուցիչներից մեկը, ով իր խոսքերով ընդհանրապես չէր անցկացնում ՎԱ բլրկի դասերը, ոչ միայն ուներ բացասական վերաբերմունք, այլև անկեղծորեն չէր թաքցնում իր դժգոհությունը:

«Էտ հատվածը ես չեմ անում: Դրա փոխարեն խոսում եմ, ասենք օլիմպիական խաղերի մասին... Որի՞ս ծնողնա նստել ու սեռական զարգացում բացատրել: Ես գնա՞մ Էտ երեխուն բացատրեմ:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Այստեղ կարևոր է նշել նաև, որ պատասխանատվության հետ մեկտեղ ուսուցիչները տեսնում են **ծնողների և ընտանիքների կողմից տրվող առաջնային գիտելիքների կարևորությունը** երեխաների համար: Ուսուցիչների հիմնական մասը նշեց, որ ծնողները չեն խոսում իրենց երեխաների հետ ՎԱ թեմաների մասին, ինչն ավելի բարդ իրավիճակում է դնում ոչ միայն ուսուցիչներին, այլ նաև աշակերտների հետագա կյանքը: «Ոնց ուզում է վերցրեք, ֆունդամենտը տանից ա գալիս: Օրինակ, ծնող կա, գալիս, ասում ա՝ ես շնորհակալ եմ, որ Դուք լավ ուսուցանում եք, և ծնող կա, գալիս, ասում ա՝ Դուք լավ չեք դաստիարակում մեր երեխային: Մոռանում ա, որ դպրոցը չի դաստիարակում, ուսում ա տալիս: Ընենց որ՝ դա ընտանիքից ա գալիս: Եթե երեխան տեղեկացված ա, բայց Ց-րդ դասարանում տեսնում ես փողոցում ծխում ա, էլ ի՞նչ տեղեկացվածության մասին ա խոսքը:» (Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

«Ցանկալի ա իրանց լինի սա՝ անհրաժեշտ ա, որովհետև սրանք տունը ծնողը չի խոսում, հարցեր կան, որի մասին ծնողի մտքով չի անցնում, որի մասին կարելի ա երեխայի հետ խոսա:» (Երևան, Նոր նորք, ավագ դպրոց)

«Մենք ստեղ դեպք ենք ունեցել, որ աղջիկը հասունացում ա անցել՝ վախեցած, չի իմացել, թե իրա հետ ինչ ա կատարվում: Ընտանիքներում մեծամասնությունը չեն խոսում ծնողների հետ՝ եկեք համաձայնվե՛ք...Որը ամաչում ա, որը գտնում ա, որ...Էն էլ, ինչ որ երեխեն խտրնետից ա գտնում, ինչ որ ընկերուհին ա ասում, ինչ որ ում գլխից ինչ եկել ա, դա են քննարկում՝ ինչ որ տեղ սխալ ա: Առարկան, ինձ թվում ա, որ պիտի լինի գոնե յոթերորդ դասարանից:» (Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

«Երբ որ երեխաները յոթ տարեկան են դառնում, մայրիկները պարտավոր են այդ թեմաներով զրուցել:» (Երևան, Ավան, ավագ դպրոց, կին)

Վերլուծությունը նաև ցույց տվեց, որ այս հարցի շուրջ ծնողների կողմից տեղեկատվության փոխանցումը ավելի կարևորվել է հիմնականում երևանաբնակ ուսուցիչների կողմից:

Այս առումով կա հետաքրքիր մի հանգամանք ևս. 2016 թվականին «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացված՝ դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության և ԱԱ դասընթացի կարևորության վերաբերյալ ծնողների դիրքորոշումներին նվիրված (որակական) հետազոտությունը¹ ցույց էր տվել, որ ծնողները մեծ մասամբ բարձր են գնահատում դպրոցում առարկայի առկայությունը: Սա պայմանավորված է մի քանի կարևոր հանգամանքներով, սակայն ամենակարևորը դիտարկվում էր այն, որ ծնողները ևս չափազանց շատ են կաշկանդվում երեխաների/դեռահասների հետ ՎԱ թեմաները քննարկելու հետ կապված:

ՎԱ բլոկի առանձին թեմաների դասավանդման առանձնահատկությունները

ՎԱ բլոկի առանձին բաժինների մասին խոսելիս ուսուցիչները հաճախ խոսսափում են թեմաների հստակ անունները նշելուց: Շատ հաճախ նրանց կողմից օգտագործվում են այնպիսի տարբերակներ, ինչպիսիք են «այդ թեմաները», «ավելի մանրամասն, կոնկրետ թեմաները», «Էդ հոդիանալ ա, պաշտպանվել ա և այլն», «Էդ սեռականը, բանը» կամ «Այս թեման շատ բան թեմա է (ծիծաղելով)»: Այս և նման այլ բառակազմերի փոփոխությունները և դրանց նման կերպով օգտագործումը կարող է մատնանշել հենց ուսուցիչների կաշկանդվածությունը հարցազրույցի ընթացքում: Սակայն սա ևս ցույց է տալիս, որ եթե ուսուցիչն ամաչում է կամ կաշկանդված է հարցազրույցի ընթացքում, ապա նա առավել ևս կաշկանդված կարող է լինել տարիքով ավելի փոքր երեխաների հետ շփման ընթացքում:

Շատ դեպքերում ուսուցիչներն իրենք հենց նշում են, որ իրենց համար դժվար է այս թեմաների շուրջ քննարկումներ ծավալել: Ինչպես նշում են հենց իրենք՝ ուսուցիչները, ՎԱ բազմաթիվ նեղ/կոնկրետ թեմաներ անց են կացվում **թեստերի և գրավոր աշխատանքների միջոցով**, որոնք կցված են ուղեցույցին: Թեստերի հետ կապված նույնպես առկա են լուրջ խնդիրներ, քանի որ որոշ ուսուցիչներ, առարկայի թեստը շփոթում էին հոգեբանական թեստերի հետ՝ նշելով, որ իրենք անցկացնում են նման թեստեր, իսկ երբեմն էլ դրանք ձեռք են բերում համացանցից:

«Բազմաթիվ թեստեր, հոգեբանական թեստեր ունենք: Լինում են կյանքի օրինակներ, դրվագներ, որ աշակերտները տալիս են իրենց հետ պատահած թեմաները, առաջարկում են և քննարկում ենք ամբողջ դասարանով՝ որպես լրացուցիչ դիդակտիկ նյութ: Ունենք բազմաթիվ բրոշյուրներ, որ քննարկում ենք,

¹ Հղումը՝ Ծնողների դիրքորոշումները դեռահասների սեռական զարգացման վերաբերյալ, 2017, [http://ysu.am/files/Parents%20Report%20Final%20\(2\).pdf](http://ysu.am/files/Parents%20Report%20Final%20(2).pdf)

անգամ անդրադառնում ենք երեխաների գրած ռեֆերատներին, իրենց մոտ առաջացած հարցերին:» (ք. Երևան, Արաբկիր, ավագ դպրոց)

Կարևոր է նշել նաև, որ այս առարկայի և ՎԱ թեմաների քննարկումը, սեռական կրթության մասին խոսակցությունները և դրա լիարժեք դասավանդման հետ կապված սահմանափակումները ուսուցիչների կողմից անմիջականորեն կապվում է **«հայ լինելու», «հայկական մենթալիտետի»** հետ: Հետաքրքիր է նաև, որ հայկական մենթալիտետով է պայմանավորված աշակերտների՝ սեռական կրթության ոլորտում նախնական գիտելիքներ ունենալու և դրանց մասին գիտելիքները խորացնելու հետ կապված բարդությունը: Համեմայն դեպս այս վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչների կողմից հղումները «հայկական»-ին ունեն բացասական երանգ այն իմաստով, որ մի կողմից **«հայկական»-ը թույլ չի տալիս աշակերտներին փոքր տարիքից սովորել և պատշաճ սեռական կրթություն ստանալ**, իսկ մյուս կողմից, **ոչ ցանկալի աղբյուրներից** (համացանց, ընկեր/ընկերուհիներ, փողոցային խոսակցություններ և այլն) **ստացված գիտելիքը/տեղեկատվությունը բերում է անդառնալի հետևանքների:** *«Մեր հայկական մենթալիտետը, որ կա, ուրեմն ասեմ, դասարանում կարող ա 80 տոկոսը բացարձակ չհասկանան էդ թեմայից, բայց էն 20 տոկոսը երևի ինձանից էլ շատ հասկանան:»* (ք. Երևան, Ավան ավագ դպրոց)

«Ինձ թվում ա, որ էս դասի նպատակը նախ էն ա, որ երեխեքին պատրաստենք դեպի ճանապարհ, դեպի մեծ ճանապարհ, որովհետև մենք հայ ենք, մենք էդ թեմաներով երեխեքի հետ գրեթե չենք շոշափում սկսած առաջին գիշերից, մինչև հասունացում, մինչև չգիտեմ...» (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

Հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ սեռական հասունացման, սեռական կյանքի և սեռական հարաբերությունների թեմատիկ շրջանակներում ուսուցիչների կողմից ամենաշատը քննարկվում են հիգիենայի և ՍՃՓՎ-ների (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, հեպատիտների տեսակներ) թեմաները: Հարցազրույցներից ստացված տեղեկատվության հիման վրա կարելի է ասել, որ երբ խոսքը գնում է ավելի ինտիմ թեմաներին, ապա քննարկումներն ունենում են երեք հիմնական արդյունք:

- **Քննարկում չի լինում ընդհանրապես:**
- **Ինտիմ բնույթի հարցերը (սեռական ակտ, գրգռվածություն և այլն) բացատրվում են ֆիլմերի «հատվածների» մասին խոսելով:**
- **Բացատրությունը տեղի է ունենում արստրակտ ձևով:**

Հարկ է նշել, որ ավելի շատ մանրամասներ տալուց ըստ էության ուսուցիչները խուսափում են, շատ հաճախ իրենք էլ շրջանցում են հարցը՝ ընդհանուր դաստիարակչական բնույթի թեմաների մասին քննարկումներից պատմելով:

Կարևոր է նշել նաև, որ **սեռական հասունացման** մասին խոսելիս կին ուսուցիչները խոսում են հիմնականում աղջիկների ֆիզիոլոգիական հասունացման

առանձնահատկություններից, ինչը կարող է ցույց տալ նաև, որ նրանք այս թեմայի շրջանակներում հիմնականում քննարկում են **դաշտանային շրջանը և կանացի զարգացման հետ կապված որոշ, ոչ ամբողջական տեղեկություններ**: Հետազոտության նպատակից ելնելով պետք է նշել, որ հատկապես մարզային քաղաքների ուսուցիչներից մի քանիսը անգամ ֆիզիոլոգիական գործընթացներին վերաբերող տեղեկություններն օգտագործում են սխալ: Օրինակ՝ «դաշտանային» բառի փոխարեն օգտագործում են «դաշտային» բառը (ընդ որում հարցազրույցների ընթացքում մի քանի անգամ):

Ի հակառակ վերը նշված իրավիճակի, Երևանում հատկապես կան ուսուցիչներ, ովքեր ըստ Էուբայան համեմատության կարգով ավելի մանրամասն, աղջիկ աշակերտներին բացատրում են **սեռական հարաբերությունների «հետևանքների» մասին** (անցանկալի հղիություն, «կորսված պատիվ», ՍՃՓՎ-ներ): Այս թեմաների քննարկումը աղջիկների հետ ուսուցիչների համար հնարավորություն է «բարոյականության» մասին ևս մեկ անգամ բարձրաձայնելու: Հարցազրույցները ցույց տվեցին, որ հենց նման մոտեցումը բերում է «մեղադրանքի մթնոլորտի» ավելի խորացմանը:

Հիգիենայի թեմատիկ բլոկի քննարկումները ևս ունեն հետաքրքիր մանրամասներ: Այդպես, հետազոտությունը ցույց տվեց, որ այս թեման սահմանափակվում է մաքուր լինելու, լողանալու, լվացվելու, մաքուր հագուստ հագնելու մասին քննարկումներով: Կարելի է ասել, որ նշված քննարկումները վերաբերում են բոլոր աշակերտներին: «*Հիգիենայի մասին, դե ոչ միայն առողջ ապրելակերպից, այլև ֆիզկուլտուրայի դասերին էլ գրեթե միշտ իրենց ճիշտ հիգիենայի վերաբերյալ ցուցումներ տրվում են, մանավանդ, երբ դասը մյուս դասերի արանքում է, ու իրենք հետո ստիպված են գնալ դասասենյակ ու Էդպես քրտնած և այլն նստել այլ դասերին՝ դա և՛ ուսուցչին է տհաճ, և՛ իրենց կողքի նստողներին:*» (Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Հիգիենայի շուրջ քննարկումները, սակայն, ունեն իրենց գենդերային ասպեկտը ևս: Աղջիկների դեպքում, ուսուցիչներից ոմանք փոխանցում են այն միտքը, որ **դաշտանային ցիկլի ընթացքում նրանցից տհաճ հոտ է գալիս**:

«Անցումային տարիքում աղջիկները, հիմնականում այն օրերին, երբ հիվանդանում են, հոտ է գալիս, դրա համար ես զգուշացրել եմ, որ Էդ օրերին ամեն օր պիտի լողանան, որ մաքրությունը պիտի իդեալական լինի, որ կողքիդ նստած տղա աշակերտը ոչ մի բան չգզա, հակառակ, հաճելի հոտ առնի քեզնից: Իրենք զարմանում են, ես էլ ասում եմ՝ «Ինչու դուք չե՞ք զգացել Էդ օրերին ձեր հոտը...», Ասում են հա՛, զգացել ենք: Ասում եմ, որ պիտի աշխատեն իրենց մաքուր պահեն թե՛ դրսից, թե՛ ներսից, որ կողքի անցնողն անգամ չիմանա, որ Էսպիսի օր ունեք դուք:» (ք. Գյումրի, ավագ դպրոց)

Սեռական կյանքի մասին զրույցները աշակերտների հետ նույնպես սահմանափակ են բովանդակային առումով: Այդպես սեռական կյանքի մասին խոսելիս ուսուցիչները հիմնականում շոշափում են **համբուրվելու** թեման: Այս թեման ըստ Էուբայան

քննարկումը տանում է դեպի **հղիության, հատկապես անցանկալի հղիության թեմայի քննարկմանը**: Այս դեպքում ևս նկատվում է հստակ **գենդերային տարանջատում**: Աղջիկների դեպքում շեշտադրվում է այն, որ նրանք պետք է ուշադիր լինեն և «չթուլանան», իսկ տղաների դեպքում հատկապես շեշտադրվում է պահպանակ օգտագործելու կարևորությունը:

«Միշտ ասում եմ աղջիկներին՝ թույլ մի եղեք, աղջիկը մի քիչ էլ պետք ա պինդ լինի, ուժեղ լինի, չէ՞ որ տղան կարող ա մոտենա, ասի՝ իմ կյանք, իմ սեր, աղջիկը թույլ սիրտ ունի, միանգամից թուլանում ա: Որ թուլանում ա, միանգամից տղան կարողանում ա մոտենա: Բայց կարող ա մի ամիս տևի ու ինքը թողնի էդ աղջկան, և աղջկա անունը ընկնի: Եթե դու գիտես, դա քոնը չի, դու մի թույլ տուր, որ ինքը ավելի մոտենա քեզ: Հա, դու ծանոթանում ես տղայի հետ, բայց արդեն որ ինքը չափից անցնում ա, թույլ մի տուր:» (Երևան, Ավան, ավագ դպրոց)

«Դա գրուցում եմ միշտ, որ սեռական ճանապարհով ա, պահպանակներ պետք է օգտագործել անպայման:» (Երևան, Ավան, ավագ դպրոց)

Այս դեպքում կարևոր է առնվազն երկու կարևոր խտրական կամ պատասխանատվության տեսանկյունից ոչ հավասար ու տարբերակված դիրքորոշում: Նախ խոսելով անցանկալի հղիության մասին, **աղջիկը մեղադրվում է սեռական հարաբերությունների մեջ մտնելու համար**, դրա հետ կապված հետևանքների համար պատասխանատվությունը կենտրոնանում է հենց աղջկա վրա: Մյուս կողմից **տղաներին տրվում են ավելի կանխարգելիչ բնույթի խորհուրդներ՝** պահպանակի օգտագործման կարևորությունն ՍՃՓՎ-ներից խուսափելու համար: Ըստ էության նույն ձևով անցանկալի հղիությանը և պահպանակների օգտագործմանն է կապվում նաև «անխոհեմ սեռական վարքագիծ» թեման, որը նույնպես տեղ է գտել ԱԱ դասընթացի ուղեցույցում և փոխկապված է մի քանի թեմաների հետ միաժամանակ:

Հետաքրքիր է և մյուս կողմից սպասելի (ելնելով նաև առօրյա դիտարկումներից), որ վերարտադրողական առողջության թեմաների շրջանակներում քննարկվում է **ծնող լինելու, ընտանիք կազմելու կարևորությունը**: Բոլոր հարցազրույցներում առողջական խնդիրներին հետևելը, սեռական կյանքը և սեռական հարաբերությունները ենթադրում են այն, որ բոլոր աշակերտները ի վերջո դառնալու են ծնող՝ հայր կամ մայր: Հետազոտության ընթացքում ոչ մի ուսուցիչ չէր նշում օրգանիզմը առողջ պահելու (զուտ անհատի տեսանկյունից), ինչպես նաև **սեփական մարմինը սեռական և վերարտադրողական առողջության պահպանման տեսանկյունից կառավարելու կարևորությունը**:

Սեռական կյանքի փորձ, սեռական կողմնորոշում, սեռ և սիրահարվածություն

Չետագոտության ընթացքում ստացվեց հավելյալ տեղեկատվություն սեռական կյանքի և սեռական կողմնորոշման մասին, որը ներառված չէ ԱԱ դասընթացի ուղեցույցում, սակայն համարեցինք կարևոր այն ներկայացնել ստորև:

Չետագոտության այս հատվածի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսուցիչների կողմից ուղղակիորեն չի քննարկվում այն հարցը, որ աշակերտները այս տարիքում սեռական կյանք կամ սեռական հարաբերություններ կարող են ունենալ: Զիմնականում քննարկվում են աղջիկ-տղա ընկերային/սիրային հարաբերությունները, իրար հետ ծանոթանալու, իրար հետ շփվելու մանրամասները: Առանձին թեմա է նաև այն, թե **ինչ են ցանկանում տղաները և աղջիկները նման շփումներից և ինչպիսի վարք պետք է դրսևորեն**: Այս ամենը քննարկվում է, ինչպես ուսուցիչներն են փաստում, ամենաակտուալ և թե իրենց, թե աշակերտների համար հետաքրքիր՝ սիրո թեմայի շրջանակներում:

Այն հարցին թե իրենց կարծիքով աշակերտները (թե աղջիկ, թե տղա) ունեն սեռական կյանքի փորձ, թե՛ ոչ, ուսուցիչները տալիս են ոչ միանշանակ պատասխաններ.

- Մի մասի կարծիքով աշակերտները միանշանակ չունեն փորձ, քանի որ այլապես հարցեր կտային (**միամիտ կամ վստահող մոտեցում**):
- Մյուս մասի կարծիքով նրանցից ոմանք գուցե ունեն, սակայն ավելի շուտ ինֆորմացիա են ստանում համացանցից (**ռեալիստական մոտեցում**):
- Եվ մի ուրիշ խմբի պատասխանների համաձայն, իրենք վստահ են, անգամ տեղյակ, իսկ որոշ դեպքերում աշակերտներն իրենք են դասերի ընթացքում նշում, որ ունեն փորձ (**տեղեկացված մոտեցում**):

Վերջին տարբերակի դեպքում կա որոշակի առանձնահատկություն, որին միանշանակ արժե ոչ պակաս ուշադրություն դարձնել: Նախ **գենդերային տարբերությունների տեսանկյունից** աղջիկները ըստ ուսուցիչների հարցեր չեն տալիս այդ թեմաներով: Սա կարող է նաև ենթադրել, որ քանի որ աղջիկների վրա սեռական կյանքի և ընդհանուր առմամբ դրված են **սահմանափակումներ**, ապա նրանք իրապես **դժվար թե հարցեր տան ուսուցչին և կասկածներ առաջացնեն իրենց իսկ վարքի մասին**: Տղաները նույնպես նման ինտիմ բնույթի հարցեր ուսուցիչներին չեն տալիս, սակայն դասերի ընթացքում **բարձրաձայնում են իրենց փորձի և այդ փորձը ձեռք բերելու**, ինչպես նաև սեռական կյանքի փորձ ձեռք բերելու հարցում հոր կամ այլ տղամարդ ազգականի միջամտությունը:

«Նույնիսկ անցած օրը տղա Էրեխեքից մեկը հարց ա տալիս, թե ո՞ր տարիքում կարելի ա և ո՞նց կարելի ա, Էն մեկն Էլ ասում ա՝ «Պապայիդ ասա՝ պապադ կասի, իմ պապան առաջին անգամ ինձ սենց տեղ ա տարել...», որ ինքը վստահ լինի, որ իրա Էրեխեն գնացել ա, կազմակերված ձևով Էդ ակտը կատարել ա:» (Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

Հենց այս տեսանկյունից Էլ հատկանշական Է մյուս առանձնահատկությունը. թեմայի նկատմամբ մի շարք (արհեստական) **սահմանափակումները, տաբուները, համատարած վախը և ամոթը թեմայի մասին խոսելու նկատմամբ**, թույլ չեն տալիս իրապես հասկանալ տեղեկատվության համապատասխանությունը իրականությանը: Ըստ ուսուցիչների որոշ տղա աշակերտներ կարող են չունենալ փորձ, սակայն ընդհանուր քննարկումներում իրենց դրսևորեն այնպես, որ կարծես թե ունեն՝ դասընկերական շրջապատում իրենց «պատվավոր» դիրքերը պահպանելու համար:

Սիրո թեմայի շրջանակներում հատկապես քննարկվում Է **սիրո և սիրահարվածության տարբերությունը**: Ուսուցիչներն իսկապես մեծ ոգևորությամբ են խոսում հենց այս թեմայի շուրջ աշակերտների հետ իրենց քննարկումների մասին: Հենց սիրո թեմայի շուրջ հարցերի պատասխաններից Էլ պարզ Է դառնում, որ **նույնասեռականության** մասին ուսուցիչներն իրենք ընդհանրապես չեն բարձրաձայնում:

«Չեմ խորանում ոչ ավանդական սեռական կողմնորոշման թեմայի շուրջ, չեմ խորանում, որովհետև կարող ա՝ սխալ եմ, կարող ա պետք ա խորանամ, բայց ես ավելի հիմնականում բան եմ անում՝ Էրեխեքին դնում եմ ճիշտ, ճիշտ ճանապարհի վրա»: (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Եթե թեման բարձրաձայնվում Է աշակերտների կողմից ինչ-ինչ պատճառներով, ապա հիմնականում երևույթն ուղեկցվում Է բացասական բացականչություններով և նույնասեռականության նկատմամբ անհանդուրժող, չընդունող, մեղադրական վերաբերմունքի արտահայտմամբ:

«Մենք ասում ենք, որ գոյություն ունի ճիշտ, բայց Էսօր ասում են՝ «Էդ ճիշտը ո՞րն ա, ընկեր Վ.յան...»: Մարդը գեներով ունի գենոֆոնդի թերացում, եկել ա իրա մոտ ինչ-որ ուրիշ հետաքրքրություն ու բան, թերի երեխա ա՝ աղջիկ-տղա, իրա մոտ կեսը աղջկա բաներ ա, կեսը՝ տղայի... Հիմա ինքը թե ո՞նց կգարգացնի Էսօրվա օրով՝ իրա խնդիրն ա: Ո՞նց կարող եք դուք դեմ կանգնեք Էն խնդրի առաջ, որը որ իրանն ա, իրա հետաքրքրությունն ա, իրա ցանկությունն ա՝ չէ՛, ասում ենք. Էրեխեք ջան, Էդ հարցը սենց ա... Դա հարցի ուրիշ կողմն ա, երբ որ նման հիվանդությունով ա, իսկ երբ որ քաշում ա, ներգրավում ա՝ ընգնում եք կամպանիայի մեջ, ու դուք չեք կարում կողմնորոշվեք՝ ծիտելն ա, խմելն ա... Դա արդեն դառնում ա սովորություն, հետաքրքրություն ա, հետո զարգացնում ա սովորություն, իսկ հետո տեսնում եք, որ

դուք ուրիշ մարդ եք դառել...Ձեզ հետ պահե՛ք ամեն վատ սովորություններից...» (ք. Երևան, Նոր Նորք, ավագ դպրոց)

Ունեցել ենք նմանատիպ քննարկումներ ոչ ավանդական սեռական կողմնորոշման մասին, բոլորը իհարկե դեմ են: Բոլորը, չի եղել մի երեխա, որ ասի «հա դե ինչ կա, եվրոպա սենցա, թող մեզ մոտ էլ լինի:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Երևանում հարցված ուսուցիչները նշում են, որ իրենց կարծիքով աղջիկներն ըստ եռության ավելի ընդունող են, քան տղաները: Կարևոր է հատկապես նաև այն հանգամանքը, որ ուսուցիչների շրջանում **չկան գիտելիքներ տրասնգենդեր/տրանսսեքսուալության, նույնասեռականության և սեռական կողմնորոշման** տարբերությունների մասին:

«Տղաները մի այլ կարգի դեմ են, Էդ իրանց ասած «գալուբոյ»-ները իրանց համար չի: Աղջիկները, ասենք, Էլի ասում են՝ «...Էդ մարդը Էդ ձևի ա ուզում՝ ինչի՞ եք դեմ գնում, ինչի՞ եք բռնանում:» Մենք տղա ունենք, որ ինքը ոչ թե Էդ ձևի ա, այլ ինքը իրա պահվածքով տենց իրան ցույց ա տալիս, դեմ են գնում, ասում են՝ «...մարդը տենց ա սիրում՝ մարդը սիրում ա, որ իրա մազերը տենց պետք ա լինի, մարդը սիրում ա, որ ինքը Էդ օծանելիքը պիտի օգտագործի՝ դուք ինչի՞ եք դեմ գնում, ինքը ձեզ չի ասում չէ՞, թե դուք ինչի եք սենց հազնվում...» Աղջիկ էլ կա, որ հըըն տղերքի նման ա մտածում, բայց տղերքի 99%-ը դեմ են դրան:» (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

Ինչպես և ենթադրվում էր՝ հիմնվելով նախորդ հետազոտությունների արդյունքների վրա, այստեղ ևս կան հղումների «**հայկական**»-ին, **ազգայինին**, **ավանդականին**: «Մենք խոսում ենք Էդ մասին, խոսում ենք ազգապահպանության տեսակետից, որ, ի վերջո, դա դավադրություն է մեր ազգի նկատմամբ, եթե մենք դա ընդունենք: Մնացել ենք մի բուն: Տղաներն են ավելի հետաքրքրված: Աղջիկներն ավելի զուսպ են արտահայտվում:» (Երևան, Էրեբունի, ավագ դպրոց)

Մարզերում տղամարդ ուսուցիչները բացառապես բացասական վերաբերմունք են ցույց տալիս և պատվով նշում են, որ աշակերտներին են նաև սովորեցնում իրենց դիրքորոշումները: «Ես իհարկե դրան դեմ եմ: Իմ խոսակցությունը նենց եմ տարել, որ միանշանակ չկա մեր պետությունում նման բան: Մեր ավանդույթներում չի կարա լինի նման բան: Մեր հիմքերը ուրիշա, մեր արմատները:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Վերադառնալով ավելի ընդհանուր սիրո թեմային, ապա հարկ է նշել, որ այն կապվում է «անխոհեմ սեռական վարքագծի» թեմային: Այն հիմնականում վերաբերում է «**սիրով**», «**ճիշտ**» **ընտանիք կազմելուն**, «**ճիշտ**» **ընտրություն կատարելուն**, որը նաև շղթայված է բազմաթիվ կամ (որոշ դեպքերում նաև նույն սեռի) ընդհանրապես զուգընկերներ չունենալու կարևորության հետ: Նման ուղղվածությամբ քննարկումները մշտական բնույթ ունեն ընդհանուր սեռական կրթության գրույցներում: **Այս դեպքում ևս աղջիկների «ուսերին է դրվում»**

տնտղելու, դիտարկելու և «լավ թեկնածու» ընտրելու «ծանր բեռը»: Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ ԱԱ ՎԱ բլոկի ցանկացած թեմա կապվում է ամուսնանալու, հետագայում «լավ տեղավորվելու» (աղջիկների համար), ծնող լինելու հետ:

«Աղջիկներին ասում եմ տենց դաստիարակչական բաներ, ասում եմ՝ տղաների հետ, որ գրուցում եք, եթե տղան քեզ ցավ պատճառի, թեկուզ խաղ եք խաղում, ինքը ձեռքիդ ուժեղ խփի, ինքը չպիտի ցավ պատճառի քեզ: Չպետք է աղջկան ցավ պատճառի, եթե ուզում ես իդեալական ամուսին ունենաս: Ասենք, ծնունդներին սեղան եք նստում, դուք հետևեք՝ որ տղան ա շատ խմող, ո՞նց կարելի ա հարբեցող մեկի հետ ամուսնանաս: Կամ եթե կարող ես փոխել, փոխի: Դու սիրում ես, բայց հետո տեսնում ես, որ ինքը սեր ունի խմիչքի: Տես՝ ինքը կփոխվի՞, թե՞ չի փոխվի: Եթե քեզ դուր ա գալիս, որ հարբեցող ինչ-որ մեկը քո ամուսինը լինի, դա արդեն քո գործն ա, բայց աշխատիր փոխել Էդ մարդուն, որ ինքը չսիրի խմիչքը:» (ք. Երևան, Ավագ, ավագ դպրոց)

Հարցազրույցներից ոչ մեկում ՎԱ բլոկի թեմաները, ինչպիսիք են սեռական հասունացումը, ՍՃՓՎ-ները և այլ թեմաներ, չեն դիտարկվում անձի զարգացման և սեռական առողջությունը անհատական մակարդակում պահպանելու տեսանկյունից:

Վերը նշված մի շարք թեմաների շուրջ արդեն իսկ կան տարածայնություններ հիմնականում ծնողների շրջանում: Ինչպես նշում են ուսուցիչները, հիմնականում ծանոթ չլինելով դասընթացի բովանդակությանը, վերջիններս ներկայացնում են բողոքներ, **նաև «արգելում են» ուսուցիչներին խոսել նման թեմաների մասին:** Հետաքրքիր է, որ այս հանգամանքը պարզ է դառնում հենց այս հետազոտության շրջանակներում, որի հիմնական տեղեկատվությունը ստացվել է ուսուցիչներից: Ինչպես ցույց է տալիս ծնողների հետ նախորդ բաժնում նշված հետազոտությունը, վերջիններս այս մասին չէին բարձրաձայնում, որը ենթադրության տեղիք է տալիս, որ **գուցե հետազոտությանը մասնակից ծնողները իրականում տեղյակ չեն եղել դասընթացից և դրա բովանդակությունից:** Այս իմաստով հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ **ի տարբերություն ծնողների երեխաներն ավելի շատ հետաքրքրություն են ցուցաբերում առարկայի նկատմամբ:**

Այս իմաստով հետաքրքրական է, որ Երևանում ուսուցիչներից մեկը բավական մեծ ոգևորությամբ է պատրաստվում դասերին: Այդպես, հարցազրույցի ընթացքում նա նշեց, որ հաջորդ տարվա համար դասընթացի ընթացքում, եթե կարողանա հաղթահարել իր իսկ կաշկանդվածությունը, **պահպանակ է ցույց տալու աշակերտներին:** Սակայն, միաժամանակ, նա ունի այն մտավախությունը, որ ծնողները կարող են չընդունել այդ փաստը, բարկանալ, դպրոց գալ, կոնֆլիկտի մեջ մտնեն ուսուցիչների հետ, մեղադրանքներ հնչեցնեն և այլն:

«Եկող տարի ուզում եմ անեմ, բայց չգիտեմ՝ կանեմ, թե ոչիսկ չեմ անի, բայց անպայման ուզում եմ իրանց բերեմ պահպանակներ ցույց տամ... Ասելը քիչ ա, բայց

կարելի ա նաև ցույց տալ, բայց մտածում եմ դպրոց ա էլի, ծնողները»:... (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

Ըստ եռթյան պետք է ասել, որ Երևանում նման իրավիճակներ եղել են: Մի քանի ուսուցիչներ հարցազրույցի ընթացքում փաստեցին, որ հաճախելով մեկ կամ մի քանի դասերի, ծնողները հիմնականում փոխում են իրենց կարծիքը դասընթացի, դասընթացի բովանդակության մասին, ինչպես նաև ի վերջո ներողություն են խնդրում ուսուցչից (ուսուցչի, նրանից սպասելիքների և ընդհանուր դիսկուրսի շրջանակներում իր իսկ կերտած արժանապատվության զգացում): *«Էդ երեխեն ուզում էր գար, հետո 3-րդ թե 4-րդ դասը անցել էր՝ իրա մաման եկավ, նստեց դասալսման, տեսավ, որ քննարկում ենք թեման երեխեքի հետ, գրքից ա՝ ես իմ ցանկությամբ չեմ անում, ոգևորվեց, ինքն էլ մեր հետ մի քանի բանի խառնվեց, հետո շուռ եկավ՝ «Ընկեր Բաբայան, ես երևի սխալ եմ հասկացել...» Ես էլ ասեցի՝*

«Երևի թե...էն, ինչ որ Դուք պիտի անեիք՝ հիմա ես եմ անում...»» (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

Այստեղ **նորից** առաջ է գալիս ծնող-երեխա կապի կարևորությունը՝ հատկապես հիմնվելով այն հանգամանքի վրա, որ ըստ ուսուցիչների, աշակերտների մեծամասնության ծնողները մանրամասն չեն զրուցում երեխաների հետ սեռական և վերարտադրողական առողջության թեմաների շուրջ, տեղյակ չեն, թե ինչ է սովորում աշակերտը դպրոցում, ինչպես նաև փորձում են իրենց երեխաներին պաշտպանել «անխոհեմ» քայլերից:

Հակաբեղմնավորիչ միջոցներ և հղիության արհեստական ընդհատում

Անդրադառնալով **հակաբեղմնավորիչ միջոցների** թեմային՝ հետազոտությանը մասնակցած ուսուցիչների մի մասը նշեց, որ դրան ընդհանրապես չեն անդրադառնում:

«Չէ, այ մարդ: Էտ թեմաները չենք քննարկում»: (ք. Վանաձոր, ավագ դպրոց):

Հաճախ հենց ուսուցչի անձնական արժեքները և դիրքորոշումները թույլ չեն տալիս նրան լիարժեք անդրադառնալ հակաբեղմնավորիչներին վերաբերող թեմային. *«Դե դեղահաբեր ընդունել, և այլն և այլն, նմանատիպ բաներ, ժամանակակից գիներոլոգների եսիմ ինչ տեխնոլոգիաներ, բայց ես դեմ եմ»:* (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Ուսուցիչների անձնական դիրքորոշումները արտահայտվում են նաև **հղիության արհեստական ընդհատման** թեմային անդրադառնալու ժամանակ. «*Հա էտ առումով հա, ըտեղ իհարկե առաջնահերթը դա ենք ուսումնասիրել էտ վարակներից խոսափելու համար, բայց հիմնականում ես իրանց էլ ուղղորդել եմ, որ եթե ժամանակը գա ասենք երեխա կամ բան, երբեք դուք կյանքում չհամաձայնեք հեռացնել: Նմանատիպ բաներից հեռու մնացեք, որովհետև դա առաջին հերթին Աստծուն դժարական բանա:*» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Հետաքրքրական է, որ որոշ դպրոցներում ուսուցիչները համարում են, որ հակաբեղմնավորիչների մասին պետք է խոսել միայն աղջիկների հետ: Սա ևս մեկ անգամ ամրապնդում է հասարակության մեջ տարածված այն կարծրատիպը, որ **անցանկալի հղիությունից կամ սեռավարակներից պաշտպանվելը կնոջ պարտականությունն է:**

«*Պահպանակի նշանակությունը, ոչ ցանկալի հղիություն և այլն, որ օգտագործեն պահպանակներ աղջիկների հետ եմ խոսում: Ասենք, էդ արանքում տղաներս իջել են ֆուտբոլ խաղալու, մենք դասարանում որոշ չափով էդ թեմայով զրուցում ենք:*» (ք. Երևան, Զանաքեռ-Չեյթուն, ավագ դպրոց):

Սակայն հանդիպեցինք նաև ուսուցիչներ, ովքեր համարում են, որ հակաբեղմնավորիչներից խոսելը շատ կարևոր է՝ «*Պետք է կամաց-կամաց գալ նրան, որ սկսեն օրինակ պահպանակի անունը լսելուց, ոչ թե ամաչեն, այլ հասկանան, որ դա մեր կյանքի սովորական ընթացքն է: Խոսում ենք ամենաշատը պահպանակի մասին քանի որ դա է ամենակարևոր միջոցը պահպանման, բայց նաև խոսում ենք հաբերի մասին:*» (ք. Վայք, ավագ դպրոց)

«*Ես նրանց բացատրել եմ, որ սեռական ակտի ժամանակ տղաները պետք է օգտվեն պահպանակներից, որպեսզի և՛ իրանք չվարակվեն, և՛ աղջիկներին չվարակեն, որ պաշտպանվեն ժամանակից շուտ հղիությունից...Այսպես:*» (ք. Գյումրի, ավագ դպրոց)

Հղիության արհեստական ընդհատման մասին խոսելը ևս հաճախ մնում է ուսուցչի հայեցողությանը և պայմանավորված է նրա արժեքային համակարգով:

«*Կոնկրետ չենք հրաժարվել, ուղղակի հաճելի չի, ես նորից եմ ասում: Ինքդ քեզ՝ որպես մասնագետ, պատմելը հաճելի չի: Ես ինձ՝ որպես կին, հաճելի չեմ զգում արհեստական ընդհատում, հղիության ընդհատում թեման բացատրեմ կամ պատմեմ 11-րդ դասարանում, ասենք: Հաճելի չի ուղղակի: Իմ կարծիքն է դա անձնական: Փորձում ենք ուղղակի անցկացնենք: Բայց ես նպատակային դասը, ոնց որ ես ստանում եմ մնացած դասերից, մնացած թեմաների քննարկումից, որ սպասեմ հաճելի հարցեր և տամ իմ մասնագիտական կարծիքը, էդ հաճույքը չենք ստանում:*» (ք. Արմավիր, ավագ դպրոց)

Հետազոտության մեջ ընդգրկված առնվազն երկու դպրոցներում հղիության արհեստական ընդհատումների թեման աշակերտների կողմից շատ ցավոտ է ընդունվում, քանի որ պարզվում է, որ երեխաների ներկայությամբ ծնողները արտահայտվել են այն մասին, որ երեխան անցանկալի է եղել:

«Իրենց համար ոչ ցանկալի ծննդաբերությունն էլ շատ ցավոտ ա: Կան երեխաներ, որ ասում են՝ իմ մաման ինձ չի ուզեցել ունենա, ես պատահական եմ եղել: Երևի նկարագրել է ծնողը ու Էստեղ գալիս ա Էն հարցը՝ ինչու պահպանակ չի օգտագործել: Դե, ասում ա՝ տենց ա ստացվել ու ոչ ցանկալի ծնունդ եմ եղել: Ու ինձ անընդհատ ասում են տանը, որ ես ոչ ցանկալի երեխա եմ: Ասում եմ, ոչ, եթե դու ծնվել ես, մայրդ քեզ ծննդաբերել ա, ուրեմն, դու ցանկալի ես: Ինչու՞ ես քեզ համարում ոչ ցանկալի:» (ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, ավագ դպրոց)

Պարզվեց նաև, որ կան ուսուցիչներ, ովքեր, պարզապես չսիրելով այս կամ այն բառը, կարող են խուսափել տվյալ թեմային անդրադառնալուց ընդհանրապես (ինչը ըստ Էոլայան վերահաստատվում է ամբողջ հետազոտության ընթացքում):

«Որ միասին են լինում, տղաները սիրում են հարցեր տալ, ավելի խորանալ, որ լսեն Էդ բանը: Աղջիկներն Էստեղ կարմրում են, ամաչում են, տղաները սկսում են ծիծաղել: Այ, Էդ պրոցեսը իմ դուրը չի գալիս: Այ, Էս տարիքում արդեն հասունացել են, ես փորձեմ միասնական անել, կարող ա չամաչեն, բայց արտահայտություններ կան, օրինակ, Էդ պահպանակ արտահայտությունը իմ դուրը չի գալիս:» (ք. Երևան, Ավան, ավագ դպրոց)

Հետաքրքիր էր նաև Երևանի ավագ դպրոցներից մեկի ուսուցչի կարծիքը **հղիանալու տարիքի վերաբերյալ**: Նա, ուղղորդվելով իր անձնական կարծիքից, աշակերտների մոտ ձևավորում է այն մտայնությունը, որ հղիանալու ամենալավ տարիքը աղջկա համար 24 տարեկանն է: *«Դե, իհարկե: Էլի սեռական հարաբերությունների հետ կապված պետք է աշխատեն մեր երիտասարդները, որպեսզի 24 տարեկան հասակում օրենքով ճիշտ հղիանան, երեխա բերեն: Ծիշտը 24 տարեկանն է:»* (ք. Երևան, Ավան, ավագ դպրոց)

Սեռական բռնություն և ոտնձգություններ

Հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը աշակերտների հետ չի խոսում նաև **սեռական ոտնձգությունների մասին**՝ համարելով այն անկարևոր թեմա:

«Քիչ, շատ քիչ եմ անդրադառնում: Էտ թեման չէի ասի, որ կարևորա, ավելի կարևոր թեմաներ կան:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Որոշ ուսուցիչներ էլ, արտահայտելով իրենց անձնական կարծիքը, տալիս են աշակերտներին այն ուղերձը, որ սեռական ոտնձգության զոհը ինքն է մեղավոր իր նկատմամբ կատարված ոտնձգության համար: Ըստ եւրոպան՝ **իրականացնելով կրկնակի զոհականացում, ուսուցիչը աշակերտներին սովորեցնում է մեղադրել այն անձի վարքը, ում նկատմամբ կատարվել է ոտնձգություն:** Այս նույն միտումը արձանագրվել էր նաև դեռահասների ծնողների շրջանում:

«Գիտե՞ք՝ ես միշտ բացատրում եմ մի բան՝ երբ որ սեռական ոտնձգություն ա լինում մի մարդու նկատմամբ, ես եղ ոտնձգողին չեմ քննադատում մենակ: Ես միշտ ասում եմ՝ պատճառ եթե չտան, չի լինի հետևանքը: Ես մեղադրում եմ նրան, նա մեղավոր ա, բայց մի տուր հնարավորություն և չի լինի դա: Այսինքն՝ ես ոչ թե եղ թեման շոշափելով ասում եմ, որ սրիկաները կարող են էսպիսի բան անեն: Բա դու ու՞ր ես, բա քո խելքն ու՞ր ա: Եթե դու չգնայիր, եղ շրջապատ չընկնեիր, գլուխդ էլ պատին չէիր տա: Բա քո առողջ դատողությունը ու՞ր ա, բա քո կարողանալ ասել ոչ-ը ու՞ր ա: Բայց չէ՞ որ դու մինչև եղ սեռական ոտնձգության հասնելը գնացել ես, հլը մի բաժակ էլ խմել ես, հլը մի բան էլ գիտակցությունդ նորմալ տեղը չի եղել, որ եղել ա դա քո հետ:» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Չարցմանը մասնակցած ուսուցիչներից **միայն մեկն էր, որ նշեց, որ աղջիկներին սովորեցնում է չհուսահատվել և չդիմել ծայրահեղ քայլերի,** նույնիսկ եթե նրանք դարձել են սեռական բռնության զոհ:

«Դասից դուրս, երբ որ վիրավորված կամ բան գալիս են ես կողմերը ջրի կամ առանձնանում են՝ անհնար ա, որ մենք չմոտենանք, չհարցնենք իրանց խնդրի մասին...Պարզ հարցնում ենք՝ Ընկերոջ հետ կապված ա՞...ե՞ մենք չենք թողնում, որ ինքը ամաչի, ու ասում ենք, որ տղան քո արցունքներին արժանի չի...Տեսց, մենք արդեն գիտենք ում հետ, ոնց՝ մի քիչ հոգսը արդեն աշխատում ենք թեթևացնել, որ իրա մոտ թեթևություն լինի՝ չդիմի ծայրահեղ բաների...Ու մենք միշտ եղ ասել ենք, որ կյանքում ինչ էլ լինի՝ հանկարծ չդիմեն ծայրահեղ բաների, ինչ էլ լինի՝ թեկուզ բռնաբարությունը...դրա վրա էլ եք ծիծաղելու հետո...Եղ պահը կարող ա վատ ա, բայց աշխատեն եղ հարցի շուրջ բան անեն...» (ք. Երևան, Նոր Նորք, ավագ դպրոց)

Չետաքրքրական է, որ ուսուցիչների զգալի մեծամասնությունը մանրամասն անդրադառնում է **միայն թրաֆիքինգի թեմային:** Բռնության, իշխանության փոխհարաբերության և խտրականության թեմաները ևս քննարկվում են հենց թրաֆիքինգի թեմայի շրջանակներում:

«Դե տեսեք, եթե մտնում ես թրաֆիքինգի թեման, Էնտեղ արդեն սկսում ես խոսել բռնությունից՝ եվ գումար, և սոցիալական վիճակ:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Չետագրտության ընթացքում բացահայտեցինք նաև, որ սեռական դաստիարակության թեման հաճախ փոխարինվում է ընդհանրապես կին/տղամարդ հարաբերությունների վերաբերվող թեմային՝

«Հիմնականում էսօր էն ժամանակնա եկել, որ 50-50 ա: Բայց իհարկե ես կողմնակից եմ որ տղամարդը մի քիչ ուրիշա էլի, պետքա հստակ ընտանիքում տղամարդու ձայնը, դիրքը ավելի բարձր լինի: Համենայն դեպս մեր հայկական ընտանիքներում, հա չեմ ասում արհամարիված լինի կինը, կամ չաշխատի հին էն հեթանոսական բաների նման, չէ, բայց նենց էլ չէ որ ընտանիքում եթե կիննա ասողը լինում, դա մի քիչ արդեն չի սազում մեր հայկական ընտանիքներին: Ամեն մեկը օրինակա բերում իրանց ընտանիքը: Իրանց հայրիկներին, պապիկներին, որ մենք տենց բան չենք տեսել:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Գենդերային դերեր

Եվ նորից, ինչպես որ այլ թեմաների դեպքում, **գենդերային դերերի** մասին խոսելիս ուսուցիչը/ուհին մեկնաբանում է այն սեփական արժեքային համակարգի տեսանկյունից:

«Ունեն կարծրատիպեր...Անկեղծ ասած՝ նկատել եմ, որ ունեն: Հենց թեստերի մեջ էդ հարցով կա թեստ՝ կնոջ, տղամարդու դերը ընտանիքում, դրսում, ու ես նկատում եմ, որ մեր հին հայկական ավանդական մտածելակերպը բոլորի մեջ կա՝ հատկապես տղաների մեջ: Ճիշտն ասած, ինձ շատ դուր ա գալիս՝ մեր հայկականը մնացել ա, էդ եվրոպականը...ինտերնետ ա՝ նայում են իրանք, սովորում են ինչ-որ բան, բայց մեր հայկականը մնացել ա: Շատ...խոսում ես ու հասկանում ես, որ իրանք ընտանիքից են ու հայկական ընտանիքից են երեխեքը՝ շատ հաճելի ա, շատ, ու ինձ շատ դուր ա գալիս, որ կոնկրետ սենց բուն հայկական մտածելակերպը երեխեքի մեջ ա:» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

«...այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիքում գլխավոր դերում պապան է, հետո նոր՝ մաման: Այսինքն՝ մայրը տնային տնտեսուհի է, զբաղվում է որոշակի աշխատանքով՝ հոգալով երեխաների կարիքները, բայց ընդհանուր տան ղեկավարումը վ, ըստ իս, պետք է լինի տան տղամարդուն:» (ք. Գյումրի, ավագ դպրոց)

Գենդերային դերերի մասին կարծրատիպերը առկա են ոչ միայն ուսուցիչների շրջանում, այլ նաև աշակերտների՝ հատկապես տղաների: Ըստ ուսուցիչների տղաների զգալի մեծամասնությունը՝ ի տարբերություն աղջիկների, դեմ է գենդերային հավասարությանը:

«Տղաները չեն ընդունում, որ կինը պետք ա հավասար լինի, անկեղծ ասեմ: Տղաները ասում են՝ ոչ, մենք ենք տան գլուխը: Ես էլ կատակով իհարկե միշտ ասում եմ՝ դուք տան գլուխն եք, բայց կանայք ձեր պարանոցն են, ոնց պտտացնեն, էդպես

դառնալու եք: Ասում ա՛ չէ, Էդպիսի բան չկա, մենք հենց Էն կարծրատիպին ենք, որ մենք ընտանիքի ամրությունն ենք, մենք պիտի աշխատենք, կինը պիտի չաշխատի: Մենք պիտի ապահովենք մեր ընտանիքին, իսկ կինը մեզ հավասար պիտի չլինի, մի աստիճան պետք ա ցածր լինի մեզանից: Ասում եմ՝ ինչու՞, բացատրի: Ասում ա՛ երբ հավասար ա լինում, Էստեղ գալիս ա Էն, որ ինչ ասի, մենք պիտի լսենք: Երբեմն մեզ հակառակվում են: Էստեղ գալիս ա վիճաբանություն ընտանիքում: Երբեմն կարող ա ես ինձ չտիրապետեմ, իրեն ծեծեմ: Իսկ Էսօր ինչ ա՛ կվազի վռագ միլիցիայություն: Տղաներն Էլ Էդպես են մեկնաբանում: Էդպես քննարկումներ եղել են:» (ք.Երևան, Բանաբեռ-Չեյթուն, ավագ դպրոց)

«Աղջիկ կա, որ մտածում ես, որ իսկական տան կին ա, տղա կա, որ ասում ա... Անցած տարի ավարտեց մեր Ալբերտը, ասում Էր՝ ,Ընձնից անցե՛ք... Աղջիկ չկա, որ տուն տանեմ... Ե, ես Էլ իրան ասում Էի՝ ,Ա՛յ քյառթու, դու սուս մնա... Էդ քո մաման, որ կարճ ա հազնում... Ե, ընդեղ թեմա ունենք՝ կօզնե՞ս կնոջդ... Ես իրան հարց եմ տալիս, ասում եմ՝ կօզնե՞ս, ասում Էր՝ ,Իյա՛, կնիկ եմ տարել տուն, որ հելլեմ աման լվամ... Ե: Ու ինքը, որ անընդհատ խոսում Էինք, ասում Էր՝ ,ՉԷ՛, չեմ ամուսնանալու, ոչ մի աղջիկ չկա, սաղ աղջիկները սենց են... Ե, ու պիտի Էդ պահին ընդեղ լինեիք, թե դասարանը ինչ Էր անում իրան՝ թե՛ տղա, թե՛ աղջիկ: Էն մյուս տղերքը իրան հարց տվեցին, ասեցին՝ ,Որ մամադ հիվանդ պառկած ա լինում՝ ոչ մի բան չե՞ս անում, կամ խանութ չե՞ս գնում... , ասում ա՛ ,Մաման սրբություն ա... Ե, ասում եմ՝ ,Ա՛յ դամբուլ, Էդ մաման Էլ ինչ-որ մեկի կինն ա չէ՞, որ քո համար Էլ սրբություն ա, ուրեմն քո կինն Էլ քո համար պիտի լինի սրբություն...» (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

Ինչպես տեսնում ենք այս հատվածից կարծրատիպային մոտեցումը երկկողմանի Է: Ուսուցչի մտածելակերպում ևս գերադասում են իսկական տան կնոջ, կարճ հազնող կնոջ մասին տարածված պատկերացումները և դիրքորոշումները:

Անդրադառնալով **ընտանիքում բռնությունների թեմային**, ուսուցիչներից մեկը նշեց, որ բոլորը դեմ են արտահայտվում ընտանեկան բռնություններին: Սակայն, նրա պարզաբանումից պարզ դարձավ, որ **թե ուսուցիչը, թե աշակերտները բռնություն են համարում միայն ծեծը:**

«Չա՛, խստությունն ընդունում են, տղամարդու դերը՝ որպես խիստ տղամարդ, որ պիտի լինի, որ կինը չաշխատի՝ դա են շատ սիրում, Էդ թեման իրանց համար... բայց բռնությունը չեն ընդունում՝ շատ հետաքրքիր ա, ու ես Էլ շատ ուրախ եմ, որ նման ձևով են մտածում:» (ք.Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Սակայն, նույնիսկ կին/տղամարդ հարաբերությունների մասին խոսելիս, հաճախ ուսուցիչները խուսափում են անդրադառնալ գենդերային դերերի թեմային՝ համարելով, որ այն կարող Է ավելորդ շփոթություն և կոնֆլիկտ առաջացնել: Հավանաբար, ուսուցիչների մեծամասնությունը տեղյակ չէ գենդեր, գենդերային դեր, գենդերային խտրականություն բառերի գիտական մեկնաբանման հետ:

«Սեռային ու գենդերային դերերը ես տարբերակում եմ, բայց երեխեքին չեմ ասում: Էտ թեմաները չենք քննարկում:» (ք.Վանաձոր, ավագ դպրոց)

«ՉԷ, գենդերային խտրականությունը ոնց ասեմ Ձեզ: ՉԷ, Էդ մի հարցը անցի...» (ք. Երևան, Զանաբեռ-Չեյթուն, ավագ դպրոց)

Հարցմանը մասնակցած բոլոր ուսուցիչներից միայն երկուսն են աշակերտներին բացատրում սեռի և գենդերի տարբերությունը:

«Գենդերային գիտելիքի հիմունքներ թեմային ես ծանոթ լինելով հանդերձ՝ իրենց ասել եմ՝ գենդերային հավասարությունը դա սեռերի հավասարությունը չէ: Գենդերային հավասարությունն նշանակում է հավասար իրավունքներ և դրանցից օգտվելու հավասար հնարավորություններ: Ես ես բանաձևը գրում եմ գրատախտակին: Մենք պիտի պայքարենք, որ մենք հավասար իրավունքներ ունենանք, որ կարողանանք օգտվել դրանից: Իսկ ի՞նչն ա մեզ խանգարում էր իրավունքներից օգտվելու համար՝ միմիայն սեփական նախապաշարմունքը: Էլ չասեմ՝ կարծրատիպեր, Էլ չասեմ՝ սոցիալական միջավայր, Էլ չասեմ՝ հարևաններ, կարծիքներ:» (ք. Երևան, Էրեբունի, ավագ դպրոց)

Ինչպես պարզեցինք աշակերտների շրջանում հիմնականում գերակայում է այն պատկերացումը, որ գենդերը դա նույնասեռականությունն է:²

«Ընդհանրապես շատ ենք քննարկում աշակերտների հետ հենց Էդ թեմաները, իրանք են ասում՝ ...Դուք գիտե՞ք դրանք որտեղ են կանգնում, ինչ են...եսիմ ինչերը...ե, ասում եմ՝ Էրեխեք ջան, դուք սխալ եք ընդունում դա, դուք սխալ եք Էդ գենդեր բառը հասկանում...ե: Էրեխեքին որ Էդ ասում ես՝ միանգամից համասեռամոլներ ու բան ա գալիս, բայց ասում ենք, որ ոչ, դա, որ ես սիրում եմ, ասենք թե, տրոլեյբուս քշել, ավտո քշել՝ դա Էլ գենդերային բան ա, որ միշտ տղաներն են արել, հիմա աղջիկները ներգրավվել են Էդ բաների մեջ, որ իրանք Էլ հաճույքով, թեկուզ, կոշիկ պատրաստում, մեքենա քշում...Դա սեռերի հավասարությունն ա աշխատանքի կամ մնացածների մեջ...Դուք մի՛ միանգամից գնացեք գենդեր բառը դարձրեք ուրիշ բան...Մեր դպրոցի երեխեքը Էլ տենց չեն ընդունում՝ իրանք արդեն գիտեն գենդերային հավասարությունը դա ինչ ա...» (ք. Երևան, Նոր Նորք, ավագ դպրոց)

Ուսուցիչներից մեկը նույնիսկ խոստովանեց, որ աշակերտները փոխեցին իր կարծիքը նույնասեռականության առաջացման պատճառների մասին:

«Չգիտեմ...Անցած օրը աղջիկներից ինչ-որ մեկը խոսում էր, ասում էր՝ գալիս ա ծնողներից, ասում եմ՝ ինչի՞ ա ծնողներից գալիս, ասում ա՝ ,Դե՛, որ տղուն տենց անընդհատ՝ սիրուն ա, Էսի հագցնենք, Էսի սենց անենք, մարդ կա, որ մինչև 7 տարեկան մազերը չի կտրում, չգիտեմ ինչ, ինչ...՝ դրանից ա գալիս...ե, ասում եմ, որ

² Ընդ որում թե ուսուցիչների, թե աշակերտների կողմից շարունակվում է օգտագործվել «համասեռամոլ» բառը:

չէ՛, դրանից չի գալիս, ես չէի ասի, որ ինչ-որ մի ծնող կարող ա ուզենա, որ իրա երեխեն դառնա տենց: Բայց իրանք ինձ հակառակը համոզեցին, ապացուցեցին, չգիտեմ ինչ արեցին՝ որ ծնողից ա գալիս, ծնողը էն փոքր ժամանակից սկսում ա իրան աղջկա նման շոյել, պաչել, չգիտեմ ինչ անել՝ ինքը տենց դառնում ա էդ ձևի: Զա՛, մաման պիտի սիրի երեխուն, բայց տարիք կա, որ ոչ էդ աստիճանի, անընդհատ պաչիկներ՝ չկա տենց բան...Ու էդ գալիս ա, որ վերջում էդ երեխեն ինչ ա դառնում՝ իրանք ինձ փորձում էին համոզել, ապացուցել, բայց որ մի քիչ մտածում ես՝ երևի...» (ք. Երևան, Աջապնյակ, ավագ դպրոց)

Սակայն, նույնիսկ այս ուսուցիչները, ովքեր ունեն պատկերացում գենդերի և գենդերային դերերի մասին, բավականին սխալ ընկալումներ ունեն գենդերային խտրականության մասին:

«Երկու սեռի մեջ մենք գենդերային խտրականություն չունենք, մեր մոտ գենդերային խտրականությունը ներսեռային է՝ կինը կնոջ նկատմամբ: Մեծ քույրը փոքր քրոջն ա ճնշում, մայրը ճնշում է իր աղջիկներին՝ նամուսով եղեք, ուրիշի տուն եք գնալու, մեզ չխայտառակեք: Աղջիկն ամուսնանում ա, ճնշվում ա տալոջ կողմից, տեգոր կնոջ կողմից, սկեսուրի կողմից: Զայ իրականության մեջ ես չեմ տեսել տենց մի տղամարդ, որը կարողանա հայ կնոջը ճնշել:» (ք. Երևան, Երեբունի, ավագ դպրոց)

Դասաժամեր և թեմաների փոփոխություններ

Չարկ է նշել նաև, որ ըստ ուսուցիչների 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարանների դասագրքերում կան շատ կրկնողություններ թեմաների մեջ: Հնչեց առաջարկ վերանայել թեմաները՝ կրկնողություններից խուսափելու համար:

Հետազոտության ընթացքում պարզեցինք նաև, որ այն ուսուցիչները, ովքեր հետևողական անցկացնում են սեռական դաստիարակությանը վերաբերող դասընթացները, ընդհանուր առմամբ գոհ են նաև դասագրքերից և թեմաների հաջորդականությունից:

«Թեմաները շատ ճիշտ են ընտրված ըստ տարիքի, արվում են վարժությունների միջոցով: Զարցերով չեն մոտենում, կարող է ամաչում են, բայց նաև ես կարծում եմ, որ շատ չեն լինում նման դեպքեր: Թրաֆիքինգին ենք անդրադառնում: Ժամանակին տղաներն էին անում, բայց հիմա աղջիկները փոխվել են ոնց որ սկսել են հրահրել: Թեմաներ և վտանգներ կա, որ միգուցե ծնողների հետ էլ արժե քննարկել:» (ք. Վայք, ավագ դպրոց)

Նույն ուսուցիչները համարում են նաև, որ սեռական դաստիարակությանը տրամադրված ժամերը քիչ են և կարիք են զգում հավելյալ վերապատրաստումների և մասնագետների հետ քննարկումների՝

«Կարծում եմ նաև, որ դասաժամերն են քիչ: Զանի որ սրանք շատ քննարկվող թեմաներ են, ամեն թեմայի համար մեկ ժամ է տրամադրված, չենք հասցնում: Հագիվ տաքանում են կրքերը թեժանում են սկսում են քննարկել հանգիստ խոսել, ստիպված սառացնում ես, հետո ուզում ես նորից բացել չի ստացվում: Կարծում եմ բոլորս էլ ունենք գիտելիքի կարիք, անընդհատ պետք է սովորել: Ես քննարկում եմ տարբեր թեմաներ մեր կենսաբանության ուսուցիչների հետ, իրավունքի մասով տեսուչի հետ, բայց սեմինարների կարիք լինում է: Կարևոր է երբ նույն ոլորտի մասնագետներ հավաքվում են, փորձի փոխանակում են անում, կիսվում են թե ով ոնց է դասավանդում, շատ կարևոր է: Ես մասնակցել եմ մեկ անգամ Դիլիջանում գենդերայի բռնություն թեմայով դասընթացի եռօրյա:» (ք. Վայք, ավագ դպրոց)

Այն ուսուցիչները, ովքեր լուրջ են վերաբերվում առարկային և փորձում են հնարավորինս համապարփակ ձևով այն ներկայացնել աշակերտներին, կարևորում են անհատական մոտեցումը:

«...Դա էլ ա անհատական: Ես Ձեզ ասեմ՝ երեխեք կան, որ գալիս են, ընենց հարց են տալիս, որ 11-րդ դասարանում նեղվում ես, որ տանը չի քննարկվում ըստենց հարցեր: Ու դու հո՞ չես դնի, ամբողջ դասարանի մոտ էդ հարցը բացատրես իրան: Ու ինքն էլ էդ հարցը չի տալիս քեզ դասի ժամին, որովհետև ինքն էլ կամաչի, որ իրա շրջապատի երեխեքը, որ սենց թեժ քննարկման մեջ են մտնում, ինքը տենց պրիմիտիվ, ամենապրիմիտիվ բանը չգիտի: Դրա համար ես ես առարկան համարում եմ լրիվ անհատական առարկա: Եվ հետո՝ եթե դու ընդհանուր թեման լավ ես բացատրում, ու դիսկուսիան լավ ա գնում, արդեն դասամիջոցին քեզ հանգիստ չեն տալիս:» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Հետաքրքրական է, որ, խոսելով առարկայի շրջանակներում թեմաներ ավելացնելու մասին, ուսուցիչների մեծամասնությունը չի նշել սեռական դաստիարակությանը վերաբերող և ոչ մի թեմա: Հիմնականում ըստ ուսուցիչների անհրաժեշտություն կա ավելացնել **առողջ սնունդին** վերաբերող թեմաներ:

Հետազոտության ժամանակ պարզ դարձավ նաև, որ ԱԱ դասաժամը դասավանդող ուսուցիչներից շատերը **խոսքի մեջ օգտագործում են ժառգոնային բառեր**՝ այդ թվում նաև ռուսերեն լեզվով:

Ուսուցիչների կողմից ստացված առաջարկություններ

Հետազոտությանը մասնակցած ուսուցիչները համարում են, որ սեռական դաստիարակության թեմաները կարողալու համար պետք է իրավիճակ հատուկ մասնագետներ:

«Եթե ունենք տենց հասարակական կազմակերպություններ, ես տեղյակ չեմ: Էտ թեմայով չգիտեմ, չեմ կարող ասել: Եթե նման մասնագետներ կան, կարելիա հրավիրել, չգիտեմ, բայց հասարակական կազմակերպություններում կան նման բաներ, թե՛ ոչ: Բայց եթե կարող են ասենք ծնողից կամ մանկավարժից ավելին տալ, նորմալ կընդունեն:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

«Իհարկե՛, շատ լավ կլիներ, լավ կլիներ բժիշկ մասնագետներ Էլ լինեին նաև՝ այո, ճիշտ կլիներ, որովհետև ինչքան Էլ մենք ներկայացնենք գրքային տարբերակով, բայց ճիշտ կլինի, որ մասնագետը Էդպես, պրոֆեսիոնալ մասնագետ ներկայացնի: Խոսի կոնկրետ ինչ-որ հարցերի շուրջ, որը որ իրանց կհետաքրքրի: Չնայած չի եղել, որ տենց հարց տան, որը որ ես չպատկերացնեմ, թե ինչ պետք աս պատասխանեմ կամ մտածեմ, որ միգուցե ես սխալ եմ պատասխանում չէ՛, չեն եղել տենց հարցեր, բայց, միգուցե իրանք ունեն, բայց չեն տալիս Էդ հարցը՝ որպես ուսուցիչ կաշկանդվելով, բայց հնարավոր աս, որ մասնագետին տրվեն Էդ հարցերը: Ինձ թվում աս, որ ճիշտ կլինի:» (ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

«Նորմալ եմ վերաբերում: Եթե հիմա կա Էտ վերարտադրողական սեռական թեման, դրա տեղը թող գա մի հատ բժիշկ, Էտ մասնագետը ու մտածի, թե ինչքանով դա դրական արդյուքն կտա, ոչ թե ուղղակի երեխեքի բերանը գցի, որ նրանք գնան ասեն մեզ մոտ Էս Էս պարապել, ծնողն Էլ գա ասի, թե Էս ինչ եք սովորեցնում երեխուս, ես իմ երեխուս հետ չեմ խոսում Էտ թեմայից, դուք ի՞նչ եք խոսում հետը: Դասարան կա, որ քուր ու ախպեր իրար կողքի նստած են , պետքա՞ Է թեմաներից խոսեմ: Պետքա հասնենք Էլի դրան:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

«Այո, պետք Է լինեն, թեկուզ հեռուստացույցով երեխաները տեսնեն, լսեն: Թեկուզ դպրոցներում գան հատուկ ժողովներ անցկացնեն 10-11-րդ դասարանցիների մոտ: Դա տեսնում եմ, իհարկե: Ես Էլ ինքս կմասնակցեմ: ՉԷ, կրճատել պետք չի: Կարելի Է կազմակերպել, գան դրսից, երեխաներին հավաքեն: Դա շատ-շատ լավ կլինի, որ երեխաները իրոք լսեն ավելի: Դասախոսներ լինեն, գան մեր դպրոց, մենք Էլ մեծ ուրախությամբ իրենց Էլ կլսենք:» (ք. Երևան, Ավան, ավագ դպրոց)

Հարցմանը մասնակցած ուսուցիչների կեսը ցանկություն հայտնեցին **նորից վերապատրաստվել** սեռական դաստիարակությանը նվիրված թեմաների շուրջ:

«Մեկ անգամ Էլ կուզենամ նստեմ դասընթացի, Էնպես չի, որ, ասեմ՝ ինչի կարիք ունեմ: Կարիք, որ Էս կաշկանդվածությունից դուրս գամ մի փոքր: Իմ խնդիրը իմ կաշկանդվածությունն Է երբեմն թեմայի հետ կապված, թե չԷ ես կաշկանդված չեմ:» (ք. Երևան, Բանաքեռ- Չեյթուն, ավագ դպրոց)

Մյուս կեսն Էլ ընդհանրապես ցանկություն չունի վերապատրաստվելու: Հետազոտության ընթացքում պարզվեց նաև, որ ոչ բոլոր ուսուցիչներն են անցել վերապատրաստում: Ավելին, որոշ մասը մինչև օրս Էլ ընդհանրապես ցանկություն չունի նույնիսկ վերապատրաստվել վերարտադրողականությանն առնչվող

թեմաներով՝ «Լիարժեք կուզենայի վերապատրաստվեի, բացի էտ թեմաներից:» (ք. Վանաձոր, ավագ դպրոց)

Ուսուցիչների մի մասը համարում է նաև, որ այս **դասընթացը պետք է լինի առանձին առարկա** և ոչ թե ֆիզկուլտուրայի առարկայի մաս:

«Էստեղ Էնպիսի թեմաներ են, որ բոլորն էլ պետք են: Ես չեմ կարծում, որ որևիցե թեմա կարելի է կրճատել: Ավելացնել կարելի է դասաժամերը, բայց ոչ ֆիզկուլտուրայի հաշվին: Եթե հնարավոր է, լինի առանձին առարկա: Ով ավելի մասնագիտացված է, ով կարող է ավելի լավ դասավանդել, ինքն էլ թող դասավանդի, որ արդյունք լինի:» (ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, ավագ դպրոց)

«Մի քիչ ավելի շուտ մտցնեն դպրոց՝ գոնե հիգիենան ավելի շուտ բերեն, որ հասունացման Էդ շրջանում Էրեխտեքը գոնե երկու դաս անցնեն՝ շատ չեմ ասում, որ եթե շատը չի լինում, որ գոնե մի երկու դաս... Դա՛, բան չունեմ ասելու՝ կենսաբանությունից անցնում են, բայց գոնե մի քիչ ավելի բաց, որ իրանք հասկանային, պատրաստված լինեն, թե ուր են գնում...» (ք. Երևան, Աջափնյակ, ավագ դպրոց)

«Այսինքն՝ հենց Էս առարկան դպրոց մտցնելը արդեն ճիշտ էր, բայց նաև շատ մեծ աշխատանք ա կատարվել, որ առարկան ճիշտ մատուցվի երեխաներին... Որ անկեղծ ասեմ՝ ավելի ճիշտ կլինի մի քիչ նոր թեմաները նորացվի, թարմացվի՝ այ նման հարցաթերթիկները շատ լինեն, որովհետև դրա հիման վրա շատ հեշտ ա դասը անցկացնել: Այսինքն՝ թեկուզ ամեն թեմայի շուրջ կարա լինի ինչ-որ հարցաթերթիկային տարբերակը, որի հիման վրա կարողանաս ներկայացնես անգամ Էս հարցը, որը մի քիչ բարդ ա ներկայացնելը: Չնայած, տենց բարդ ոչինչ չկա, իրո՛ք, երբ որ երեխեքի հետ ընկերական, մտերմիկ հարաբերություն կա: Իհարկե՛, չափից դուրս էլ չէ, որովհետև, եթե չափից դուրս եղավ... պիտի ուսուցիչ-աշակերտ սահմանը մնա, պիտի Դուք-ի սահմանը մնա, ինչքան էլ որ դու լավ ուսուցիչ ես, լավ ընկեր ես, բայց ավագ ընկեր ես: Դու պիտի լինես ավագ ընկեր, բայց ոչ Էնքանով որ հարգանքի սահմանն անցնի: Իմ միակ առաջարկությունը Էս ա, որ, երևի, Էդ պատմվածքները մի քիչ ավելի շատ կամ թարմացված տարբերակով լինեն, որովհետև նույնից արդեն հոգնել են: Ես փորձել եմ ինչ-որ մի բան նույնիսկ Էդ պահին ինքս ինձնից հորինեմ, որովհետև, եթե գիտեմ, որ դա կօգնի թեման ճիշտ ներկայացնելուն: Ու, հարցաթերթիկները շատ հետաքրքրում են երեխեքին... Միզուցե նաև վիդեոյի տարբերակներն էլ օգնեն, որ վիդեոներ լինեն:»

(ք. Երևան, Կենտրոն, ավագ դպրոց)

Սակայն, երբ խոսքը գնում է դասաժամերի և թեմաների ավելացման մասին, հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը չնշեց սեռականության թեման: Փոխարենը՝ կարևորվեցին վարքագծին, Էթիկայի կանոններին վերաբերող թեմաները:

«Կրճատել՝ չէ, հլը կարելի ա ավելացնել...Ի՞նչը կրճատել՝ հլը Էնքան լավ թեմաներ կա, որ Էրեխեն պիտի պատկերացում ունենա...Կարելի է ավելացնել ու չկրճատել...Ի՞նչ թեմաներ՝ как себя вести в транспорте, как себя вести, երբ հյուր են գնացել, դիսկատեկա կերթան, ուր կերթան՝ как себя вести, կարելի է գնալ թե չէ...Շատ հարցեր կան, որ կարելի է բարձրացնել՝ ում հետ ինչպես պահել քեզ:» (ք. Գյուլմրի, ավագ դպրոց)

Մինևույն ժամանակ կան ուսուցիչներ, ովքեր ընդհանրապես չեն ցանկանում դասավանդել այս առարկան և անում են դա ստիպված:

«Որ շատ անկեղծանամ՝ ես ընդհանրապես չեի Էլ ցանկանա Էս դասերը վարել...Դե, ես ունեմ իմ մասնագիտությունը, Փառք Աստծո, չասեմ, որ շատ գիտակ եմ, բայց իմ վերապատրաստումը, Ինստիտուտի տարիներից իմ անցածը շատ ավելի բավական ա...Եթե ուզենայի՝ ես կոնկրետ Էդ մասնագիտությունը կընտրեի, չգիտեմ՝ բժշկական կամ կենսաբանության մասնագետ: Վերապատրաստման կարիք չեմ զգում ինչի՞ համար, որովհետև Էն, ինչը որ ունենք մենք, Էն՝ ինչը որ տված ա գրքով, որ պիտի մատուցվի աշակերտին, ես Էդ տղաներին կարամ տամ, բայց աղջիկներին՝ չէ: Ես չեմ կարծում, որ կոնկրետ բառեր կան, որ ինչ փիլիսոփայական բառեր Էլ ուզում ես արտահայտի՝ մեկ ա դրանց բովանդակությունը չի փոխվելու...:» (ք.Արմավիր, ավագ դպրոց)

Ուսուցիչների կարծիքով սեռական դաստիարակության դասընթացները անհրաժեշտ են նաև դեռահասների **ծնողների համար**: «Բայց ես ամենից շատ կուզեի, որ ծնողների հետ գան երեխաները, ծնողներն Էլ լսեին, որովհետև ծնողները շատ մեծ դեր ունեն դրա մեջ, շատ մեծ: Մեծամասնությամբ ծնողներն են մեղավոր, որ երեխաները տեղեկացված չեն ոչ մի բանից:» (ք. Երևան, Ավան, ավագ դպրոց)

